



Արա Ղապարյան

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Funded
by the European Union
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Implemented
by the Council of Europe

Funded
by the European Union
and the Council of Europe



Implemented
by the Council of Europe

ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2020

Ձեռնարկի հեղինակ՝
Եվրոպայի խորհրդի փորձագետ

Արա Ղազարյան

Ձեռնարկի պատրաստմանն աջակցել է
Եվրոպայի խորհրդի միջազգային փորձագետ

Աուդիոն Հոգնես Բերգը

Սույն ձեռնարկը պատրաստվել է «Աջակցություն քրեական արդարադատության բարեփոխումներին և եվրոպական չափանիշների կիրառման ներդաշնակեցումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի «Գործընկերություն հանուն լավ կառավարման» կառուցակարգի կողմից: Սույն ձեռնարկում ներկայացված տեսակետները որևէ կերպ չեն արտահայտում Եվրոպական միության և Եվրոպայի խորհրդի պաշտոնական տեսակետները:

© Եվրոպայի խորհուրդ

© Արդարադատության ակադեմիա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 5

Թեմա 1	Իրավական-վերլուծական IRAC մեթոդական համակարգի ուսուցանում	9
Դաս 1	Հիմնախնդրի դուրսբերում	9
Դաս 2	Իրավական նորմի դուրսբերում	9
Դաս 3	Իրավական-վերլուծական ռազմավարություն	29
Դաս 4	Իրավական մեկնաբանություն	29

Թեմա 2	Դատական ակտերի շարահյուսություն և բառընտրություն	51
Դաս 5	Դատական ակտերի շարահյուսություն	53
Դաս 6	Դատական ակտերի բառընտրություն	60

Թեմա 3	Դատական ակտերի վկայակոչում նախադեպային իրավունքում	69
Դաս 7	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վկայակոչումը դատական ակտերում	69

Թեմա 4	Խոցելի խմբերի վերաբերյալ դատական ակտեր կազմելու առանձնահատկությունները 79
Դաս 8	Հաշմանդամություն ունեցող անձինք 79
Դաս 9	Վարժություններ 79
Դաս 10	Վարժություններ 79

Ներածություն

«Դատական ակտերի մշակման հմտություններ» ձեռնարկը գործնական ուղեցույց է Արդարադատության ակադեմիայի դասվարների համար, ում ունկնդիրները դատավորներ, դատավորների օգնականներ ու դատավորների թեկնածուներ են: Ձեռնարկը կարող է օգտագործվել նաև այլ ոլորտի իրավաբանների համար՝ ճանաչողական նպատակով: Ձեռնարկը քայլ առ քայլ ուղեցույց է դասընթացներ վարելու համար: Ներառված են նաև տեսական, նաև գործնական նշանակության ուսումնական նյութեր, թեև բովանդակության մեծ մասը գործնական վարժությունների, պարապմունքների համար նախատեսված նյութեր են:

Դասընթացների հիմնական նպատակը դատական ակտերին պարզություն ու հստակություն հաղորդելն է: Սա ընդհանուր ռազմավարություն է, որին ձգտում են Եվրոպայի խորհրդի անդամ երկրները: Դատական ակտերի հստակությունը, պարզորոշությունը ուղղակիորեն կապված են մի շարք անհատական հիմնարար իրավունքների, ինչպես նաև ժողովրդավարական կառավարման հանրային իրավունքի իրականացման հետ: Հաշվի առնելով այս նպատակները, ընտրվել են կոնկրետ ոլորտներ ու թեմաներ, որոնց շրջանակներում անհրաժեշտ է զարգացնել հմտություններ պարզ ու հստակ դատական ակտեր կազմելու համար:

Դասընթացը բաղկացած է չորս թեմայից և տասը դասից: Թեմաներով նախատեսվում է հաղորդել գիտելիքներ և գործնական հմտություններ իրավավերլուծական ու մեկնաբանության մեթոդաբանության, դատական ակտերի շարահյուսության ու բառընտրության, նախադեպային իրավունքի կիրառության ու խոցելի խմբերի վերաբերյալ դատական ակ-

տեր կազմելու առանձնահատկությունների մասին: Սրանք այն ոլորտներն են, որոնց վերաբերյալ հարցումների արդյունքում շահառու խմբերը ցանկություն են հայտնել ստանալ գործնական կիրառության գիտելիքներ և հմտություններ: Նշված թեմաները և համապատասխան դասընթացները փոխկապակցված չեն: Հետևաբար, ցանկության դեպքում կամ ռեսուրսների առկայությամբ կամ բացակայությամբ պայմանավորված կարելի է թեմաներից յուրաքանչյուրն առանձին զարգացնել, ծավալները մեծացնել կամ նվազեցնել և մատուցել որպես առանձին դասընթաց: Օրինակ, դատական շարահյուսությունը և բառընտրությունն առանձին թեմա է, որը հիման վրա կարելի է զարգացնել մի ամբողջ դասընթացի ծրագիր՝ ներմուծելով ավելի շատ բաղադրիչներ և տրամադրելով ավելի շատ դասաժամեր:

Ուղեցույցում ներկայացված են ոչ միայն տեսական նյութեր, այլ նաև հրահանգներ՝ ուղղված դասվարներին: Յուրաքանչյուր դասի համար նախ ներկայացվում է դասի նպատակը, այնուհետև՝ ակնկալվող արդյունքները, ժամանակ առ ժամանակ ներդրված են հրահանգներ՝ ուղղված դասվարին կից գրադարանից այս կամ այն նյութը օգտագործելու վերաբերյալ: Յուրաքանչյուր դասի համար նախատեսված գրադարանում ներառված են Սահիկներ, ազդարարներ, տեքստային վարժություններ, որոնք պարտադիր պետք է օգտագործվեն: Ներառված են նաև հավելյալ ընթերցանության համար նյութեր, օրինակ՝ ձեռնարկներ, դատական ակտեր: Տեքստում հաճախ հանդիպում են տեքստերի կամ տեսապատկերների հիպերլինքեր: Նման ներառական մոտեցումները հեշտացնում են դասվարի աշխատանքը, քանի որ դասի ընթացքում նա կարող է հեշտությամբ բանավոր ներկայացումից անցում կատարել տեսապատկերի կամ համացանցում տեղադրված որևէ նյութի վրա:

Ուղեցույցը կազմելիս օգտագործվել են Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ ՄԻԵԴ) դատական

ակտեր, միջազգային փաստաթղթեր, հիպերլինքով վկայակոչվել են տեսաֆիլմեր, այլ փաստաթղթեր: Ուղեցույցը կազմելիս հեղինակը օգտվել է «Դատական նախադեպի իրավունքը և ուսմունքը». ձեռնարկ պրակտիկ աշխատողների համար» ձեռնարկից, Ռուբեն Մելիքյանի «Իրավաբանական գիր և գրականություն» ուսումնական ձեռնարկից և հեղինակներ Յուրի Ավետիսյանի, Արսեն Մկրտչանի և Լիանա Սարգսյանի **«Իրավաբանական գրագրության լեզու»** գրքի երկու մասերից, որոնք վերաբերում էին իրավաբանական տեքստերի շարահյուսությանը և բառընտրությանը: Վերջին երկու հետազոտություններն առաջարկվել է նաև որպես լրացուցիչ ընթերցանության նյութ համապատասխան բաժիններում:

Հուսով ենք, ուղեցույցը կձառայի իր նպատակին:

Ուղեցույցում օգտագործված սիմվոլներ



ԴԱՍ



Դասընթացի նպատակ



Ակնկալվող արդյունքներ



Տեսական նյութ



Գործնական նյութ



Գրադարան



Ճիշտ տարբերակ



Սխալ տարբերակ



Մեջբերում փաստաթղթերից



ԴԱՍ 1 - 2

Իրավական-վերլուծական IRAC մեթոդական համակարգի ուսուցանում

Դաս 1 Հիմնախնդրի դուրսբերում 2 ժամ

Դաս 2 Իրավական նորմի դուրսբերումը 2 ժամ



Դասի նպատակն է դատական ակտերի հիմնավորման ու պատճառաբանման IRAC ունիվերսալ մեթոդական համակարգի ներդրումը և տարածումը դատական պրակտիկայում, որը կնպաստի պատճառաբանված, պարզ ու հստակ դատական ակտեր ունենալուն: Այդ ընդհանուր նպատակի ներքո նախատեսվում է ունկնդիրներին ծանոթացնել IRAC համակարգի առաջին՝ «իրավական խնդրի դուրսբերում», և երկրորդ՝ «կանոնի դուրսբերում» իրավավերլուծական փուլերի հետ:



Ակնկալվող արդյունքները .

- ունկնդիրները կսովորեն իրավական փաստաթղթերի կազմման և վերլուծության IRAC մեթոդաբանության բոլոր բաղադրատարրերը,
- կսովորեն, թե ինչպես փաստերից և իրավունքի մասին հարցից վերհանել և առանձնացնել իրավական խնդիրը (հիմնախնդիրը),
- կսովորեն, թե ինչպես դուրս բերել հիմնախնդրի կարգավորող նորմը (կանոնը),

- ձեռք կբերեն հմտություններ կանոնը ձևակերպելու համար, օրինակ՝ կսովորեն կատարել կանոնի մասնատրամ:



Արդարադատությունը ոչ միայն պետք է իրականացվի, այլև տեսանելի լինի, թե ինչպես է իրականացվում: Այս թևակոր խոսքը առավել ճշմարտացի է դատական ակտերը պատճառաբանելու առնչությամբ: Արդարադատության նկատմամբ հանրային վերահսկողության պահանջից բխում է, որ ն դատավարության մասնակիցները, ն հասարակության ներկայացուցիչները պետք է հնարավորություն ունենան տեսնել, թե դատավորն ինչպես է հանգում գործի լուծմանը: Դա անհրաժեշտ է դատավարության մասնակցին դատական ակտը բողոքարկելիս և մնացած այլ հիմնարար իրավունքներն իրականացնելիս, օրինակ՝ մրցակցային դատավարության, զենքերի հավասարության, անկախ ու անաչառ դատարանի, հակընդդեմ հարցման, մեղադրանքի բնույթի և հիմքերի մասին անհապաղ տեղեկացված լինելու, պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար հնարավորություններ ունենալու հիմնարար իրավունքների իրականացման համար: Ավելին, պատճառաբանված դատական ակտ ունենալն ինքնուրույն հիմնարար իրավունք է և արդար դատական քննության բաղադրիչ է: Դա նշանակում է, դատական ակտը չպատճառաբանելն ինքնին կարող է հանգեցնել արդար դատական քննության ընդհանուր իրավունքի խախտմանը:

Դատական ակտերի հիմնավորման տարբեր համակարգեր գոյություն ունեն, որոնց մեծ մասը ձևավորվել է դատական պրակտիկայի ընթացքում: Սույն դասընթացով ներկայացվում է անգլո-սաքսոնական համակարգից սերվող IRAC մեթոդական համակարգը, որն ապացուցել է իր ունիվերսալ բնույթը, այսինքն՝ կիրառելիությունը ն անգլո-սաքսոնական, ն ռոմանո-գերմանական (մայրցամաքային) իրավական համակարգում: Ավելին, դրա առանձին տարրերը կամ տարբերակները կիրառ-

վում են նաև միջազգային որոշ ատյանների, օրինակ, եվրոպական դատարանի կողմից: Դրա առանձին տարրերը կիրառվում են նաև ՀՀ դատական համակարգում՝ առավել համակարգված Վճռաբեկ դատարանի կողմից: Վճռաբեկ դատարանը, որպես կանոն, կատարում է հիմնախնդրի ձևակերպում և կարգավորող նորմերի դուրսբերում՝ իր որոշումների եզրահանգումներին վերաբերող մասերում:

IRAC համակարգը ներկայացնում է չորս քայլից բաղկացած վերլուծական հատվածներ: Յուրաքանչյուր հատված մատնանշում է IRAC համակարգի տառերից մեկը, որոնց անվան առաջին տառերից էլ կազմվում է այդ բառը.

1. Հիմնախնդիր (կամ խնդիր) (I – Issue),
2. Կանոն (R-Rule),
3. Վերլուծություն (A-Analysis),
4. Եզրահանգում (C- Conclusion):

Վերլուծական սույն համակարգը կիրառելիս դատավորը գրավոր կամ մտովի (նախընտրելի է, իհարկե, գրավոր) անցնում է այս չորս փուլերից յուրաքանչյուրով: Արդյունքում դատավարության մասնակիցները և հասարակության ներկայացուցիչները տեսնում են, թե ինչպես է դատավորը ձևակերպում խնդիրը, կարգավորող նորմ(եր)ը, այնուհետև կարգավորող նորմը կիրառում հիմնախնդրի նկատմամբ վերլուծական կոնկրետ մեթոդների եղանակով (դեդուկտիվ, ինդուկտիվ մեթոդներ, անալոգիա և այլն), և վերջում հանգում կոնկրետ լուծման: Այլ կերպ ասած՝ արդարադատությունը ոչ միայն իրականացվում է, այլ նաև տեսանելի է լինում, թե ինչպես է իրականացվում:

Այժմ կոնկրետ օրինակներով ցույց տանք, թե ինչպես է կիրառվում IRAC վերլուծական համակարգը: Մեր վերլուծությունը կատարենք նշված երկու փաստերի հիման վրա, որոնցից մեկը քրեական, իսկ մյուսը՝ քաղաքացիական բնույթի դատական գործերի համառոտագրեր են:

Գործ 1 – քաղաքացիական



Հ-ն ընկերության անվտանգության պետ է: Աշխատանքի ընթացքում հայտնաբերել է չարաշահումներ պաշտոնատար անձանց կողմից: Շուտով նրան աշխատանքից ազատում են: Նա կոռուպցիայի վերաբերյալ իր հետազոտություններն ընկերության կայքում նշված էլեկտրոնային փոստով ուղարկում է ընկերության բաժնետերերին: Կայքում նշվում է, որ յուրաքանչյուր ոք, ով գիտե կոռուպցիայի փաստերի մասին, կարող է ընկերությանն այդ մասին տեղեկացնել նշված էլեկտրոնային հասցեով, որի գաղտնիությունը երաշխավորված է: Որոշ ժամանակ անց ընկերության անվտանգության հարցերով փոխտնօրենը հանդիպում է նրա հետ ու հարցնում, թե արդյոք նա է ուղարկել իր ձեռքում գտնվող փաթեթը: Հ-ն ասում է, որ ինքն է ուղարկել՝ էլեկտրոնային եղանակով: Փոխտնօրենը խնդրում է ստորագրել՝ ի հավաստումն, որ ինքն է ուղարկել փաթեթը: Մի որոշ ժամանակ անց ընկերության ֆինանսական հարցերով փոխտնօրենը Հ-ի դեմ դատական հայց է ներկայացնում դատարան Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով: Նա պնդում է, որ Հ-ն արատավորել է իր պատիվն ու արժանապատվությունը, քանի որ իր ուղարկած գրությամբ զրպարտել է իրեն կոռուպցիայի և ֆինանսական յուրացումների մեջ: Հետագայում պարզվել է, որ անվտանգության հարցերով փոխտնօրենը ստացել էր հրահանգ ընկերության բաժնետերերից՝ հետաքննել նամակում նշված փաստերը, որի նպատակով փոխտնօրենն իրականացրել է հետաքննություն, սակայն ոչինչ չի հաստատվել:

Գործ 2 – քրեական



Ա-ն դատապարտվել է ավազակային հարձակման համար: Մեղադրական դատավճռում դատարանը հիմնվել

է տուժողի նախաքննական ցուցմունքի վրա, քանի որ դատարանում տուժողն ասել է, որ արդեն վստահ չէ, որ Ա-ն էր կատարել իր անձի նկատմամբ ոտնձգությունը: Դատարանը հիմնվել է նաև մեկ այլ ականատես վկայի նախաքննական ցուցմունքի վրա, ով ականատես է եղել դեպքին, իսկ այնուհետև ճանաչման գործողության ժամանակ ճանաչել է մեղադրյալին որպես հանցագործությունը կատարած անձ: Այդ վկան մեկնել է ՀՀ-ից Ռուսաստան արտագնա աշխատանքի ու այդ պատճառով հնարավոր չի եղել ապահովել նրա ներկայությունը դատական քննությանը: Դատարանը հիմնվել է նաև երկու այլ վկաների ցուցմունքների վրա, ովքեր նախաքննության փուլում ու դատարանում ցուցմունք են տվել, որ տուժողը մի առիթով իրենց ասել է, որ հանցագործություն կատարել է մեղադրյալը, սակայն չէր ուզենա, որ նա դատվեր, քանի որ նրա հարազատները փոխհատուցել են իր վնասը ու իրենցից ներողություն խնդրել: Դատարանը հիմնվել է նաև փողոցի տեսախցիկի տեսագրության վրա, որում երևում է, թե ինչպես է մի տղամարդ տուժողի վզից պոկում ոսկե մանյակը ու դիմում փախուստի: Այդուհանդերձ, տեսագրության մեջ մեղադրյալի դեմքը հստակորեն չի երևում, բայց պարզորոշ երևում է, որ անձն ուներ սև մորուք, կրում էր կապույտ տաբատ ու սև վերնաշապիկ: Նման տեսք է ունեցել նաև մեղադրյալը, երբ նրան բերման էին ենթարկել կես ժամ անց դեպքի վայրից քիչ հեռու գտնվող սրճարանից: Վերաքննիչ բողոքում Հ-ն պնդում էր, որ զրկվել է արդար դատաքննության իրավունքից, քանի որ հնարավորություն չի ունեցել հարցաքննել իր դեմ ցուցմունք տված առանցքային վկային, ով գտնվում էր Ռուսաստանում:

IRAC համակարգի առաջին քայլը հիմնախնդրի ձևակերպումն է: Ուստի, սկսենք հիմնախնդրի ձևակերպումից, որից հետո նշված երկու օրինակներում քայլ առ քայլ ցույց կտանք,

թե ինչպես են փաստարկները զարգանում՝ ընդգրկելով մյուս քայլերը:

1. Հիմնախնդիրը կամ իրավական խնդիրը վերլուծական աշխատանքի առաջին քայլն է: Խնդիրը իրավական հարցն է, որը պետք է լուծվի վերլուծության միջոցով: Այսինքն, խնդիրն իրավավերլուծական փուլի մեկնարկն է: Հետևաբար, շատ կարևոր է, որ իրավական խնդիրը ճիշտ ձևակերպվի, հակառակ դեպքում հաջորդ երեք փուլերում իրավական վերլուծությունը կընթանա սխալ ուղղությամբ ու դատարանը կհանգի սխալ եզրահանգման:

Իրավական խնդիրը.

- պետք է լինի վերացական հարցադրում՝ չլինի անձնավորված,
- կարող է ձևակերպված լինել ոչ միայն որպես հարցադրում, այլև՝ կատեգորիկ բնույթի հայտարարություն,
- պետք է ձևակերպված լինի պարզ, մատչելի, ցանկալի է՝ ոչ մասնագիտական լեզվով:
- չպետք է ներառի միայն իրավունքի հարցի հարցադրում, օրինակ՝

Գործ 1



Արդյոք Հ-ի կատարած արարքը զրպարտություն է Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի հիմքով:

Կամ չպետք է ներառի միայն փաստի հարցադրում.

Գործ 1



Արդյոք Հ-ն ուղարկել է էլեկտրոնային նամակ, եթե այո, արդյոք էլեկտրոնային նամակը հասցեագրել է փոխփնտրենին:

Իրավական խնդիրը պետք է պարունակի իրավունքի հարցի ու փաստի **համադրում**, քանի որ հաջորդ փուլերում իրավունքի հարցը կարգավորող նորմի հետ կիրառվելու է փաստերի նկատմամբ՝ գործի լուծում ստանալու նպատակով: Հետևաբար, իրավունքի հարցադրումը կարող է ունենալ հետևյալ տեսքը.

Գործ 1



Որպեսզի Հ-ն ենթարկվի քաղաքացիական պատասխանատվության Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով, նա պետք է կատարած լինի հրապարակային եղանակով արատավորող բնույթի այնպիսի փաստացի հայտարարություն ֆինանսական հարցերով փոխտնօրենի մասին, որը չի համապատասխանում իրականությանը:

Հիմնախնդրի այս ձևակերպումն ընդգրկում է հղումներ իրավունքի հարցերին: Դրանք Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի հիմքով զրպարտության երեք չափորոշիչներն են. 1) **հրապարակային** եղանակով, 2) **արատավորող** բնույթի, 3) **փաստացի** հայտարարություն: Իսկ փաստի մասին հղումը հայտարարության՝ ֆինանսական տնօրենի վերաբերյալ լինելու և իրականության չհամապատասխանելու մասին են: Հիմնախնդիրը կարելի է ձևակերպել նաև կոնկրետ հարցադրումով.

Գործ 1



Կարող է էլեկտրոնային եղանակով ուղարկված փաստի մասին հայտարարությունը համարվել հրապարակայնորեն կատարված հայտարարություն, եթե այո, կարող է նման հայտարարությունը հանգեցնել պատասխանատվության, եթե դրանում ներառված են անձին զրպարտող բնույթի տեղեկություններ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի իմաստով:

Իրավական հարցադրման այս տարբերակում իրավունքի ու փաստի մասին հարցերը նույնպես համադրված են, սակայն նախկին օրինակի համեմատ տարբերությունը նրանում է, որ սրանում առավելապես շեշտադրված է, թե արդյոք էլեկտրոնային եղանակով առաքված նամակը կարող է համարվել հրապարակային եղանակով կատարված հայտարարություն: Ինչպես նշում է իր ձեռնարկում Ռուբեն Մելիքյանը, հարցադրումները կարող են լինել նաև մի քանիսը, կամ մեկ վերլուծական միավորի սկզբում կարող են շարադրվել մի քանի հարցադրումներ և վերջում կատարվել մեկ ընդհանուր եզրահանգում, ու այդ դեպքում վերլուծության ամբողջական շղթան կունենա հետևյալ տեսքը. 1-(i-r-a-c)1-(i-r-a-c)2-(i-r-a-c)3-C կամ՝ (հ-կ-վ-ե)1-(հ-կ-վ-ե)2-(հ-կ-վ-ե)3-(հ-կ-վ-ե)4: Դատավորը, ով կազմում է հիմնախնդիրը, ունի հայեցողություն, թե որ հարցի վրա կենտրոնացնի դատական ստուգման բևեռը: Հաճախ դա պայմանավորված է նրանով, թե հայցվորը իրավունքի մասին ինչ հարց է բարձրացնում:

Հիմա նույն մտավարժանքը կատարենք Գործ 2-ի առումով: Իրավական խնդրի հետևյալ ձևակերպումն ունի միայն իրավունքի հարցի հարցադրում, որի դեպքում հարցադրումը կտրված է փաստերից, խիստ տեսական է, որը սխալ է.

Գործ 2



Եթե Ա-ն զրկվել է Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հակընդդեմ հարցման հնարավորությունից, ուրեմն խախտվել է մեղադրանքից պաշտպանվելու իրավունքը, որն ինքնաբերաբար հանգեցրել է արդար դատաքննության հիմնարար իրավունքի խախտմանը Սահմանադրության 63-րդ հոդվածի հիմքով:

Իսկ խնդրի հետևյալ ձևակերպումը ներառում է միայն փաստի մասին հարցադրում ու կտրված է տեսական հիմքից, որը նույնպես սխալ է.

Գործ 2



Ի՞նչն էր պատճառը, որ հնարավոր չի եղել ապահովել վկայի ներկայությունը դատական քննությանը, արդյոք վկան ունեցել է հարգելի պատճառ դատական քննությանը չներկայանալու համար:

Առաջարկում ենք իրավական հարցադրման հետևյալ եղանակը.

Գործ 2



Դատարանի առջև դրված են հետևյալ հիմնախնդիրները. արդյոք դատարանը կիրառել է օրենքով սահմանված ու ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վկայի ներկայությունը դատական քննությանը ապահովելու համար: Եթե այո, ապա արդյոք վկայի ցուցմունքը առանցքային նշանակություն ուներ, եթե այո, արդյոք առկա էին հակընդդեմ հարցման իրավունքի չապահովմանը հակակշռող քրեադատարական գործոններ, որոնք կփարատեն նախաքննական ցուցմունքի արժանահավատության վերաբերյալ բոլոր կասկածները:

Այս երեք մասից բաղկացած իրավական հիմնախնդիրը համադրված եղանակով պարունակում է և՛ իրավունքի, և՛ փաստի մասին հարցադրումներ: Որպես կանոն, իրավական հիմնախնդիրը ձևակերպված է վերացական հարցապնդման տեսքով, կամ էլ ուղղակի նշվում է, որ դատարանի առջև դրված է տվյալ խնդիրը լուծելու համար:

Հակընդդեմ հարցման իրավունքի մասին Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին ծանոթ յուրաքանչյուր անձ կարող է պնդել, որ նշված երեք պայմանները բխում են Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի դ-կետի մասին Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Այդ նորմը համարժեք է ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ կետին: Հակընդդեմ հարցման իրավունքի հարցը կարգավորվում է նաև Վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքով (տե՛ս Համայակ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԼԴ/0212/01/10 որոշում, կետեր 22-24): Ինչ վերաբերում է փաստերին, ապա երեք վավերապայմաններն անխուսափելիորեն հանգեցնելու են նաև փաստերի հետազոտությանը: Օրինակ, վերլուծության փուլում անհրաժեշտություն է առաջանալու պարզելը, թե արդյոք դատարանը կայացրել է վկային բերման ենթարկելու, նրա բնակության վայրը պարզելու, իրավական փոխօգնության միջազգային մեխանիզմի դիմելու ուղղությամբ քայլեր: Անհրաժեշտություն է առաջանալու նաև պարզելը, թե արդյոք նախաքննության փուլում իրականացվել են համարժեք քննչական գործողություններ, որոնք կարող են հակակշիռ հանդիսանալ հակընդդեմ հարցման չիրականացված իրավունքին ու այդպիսով չեզոքացնել ապացույցի արժանահավատության վերաբերյալ որևէ կասկած: Սրանք այն հնարավոր փաստարկումներն են, որ դատարանը մեծ հավանականությամբ անելու է վերլուծության փուլում կարգավորող նորմը փաստերի նկատմամբ կիրառելիս:

Իրավական խնդրի սահմանման բազմաթիվ օրինակներ կարելի է գտնել Վճռաբեկ դատարանի որոշումներում: Իր որո-

շումների 4-րդ բաժնում, որը վերնագրված է «**4. Վճռաբեկ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը**», Վճռաբեկ դատարանը, որպես կանոն, առաջին հերթին ձևակերպում է իրավական խնդիրը, որից հետո շարադրում է կարգավորող նորմ(եր)ը: Ահա մի քանի օրինակներ Վճռաբեկ դատարանի պրակտիկայից:

Մեջբերում դատական ակտից	Գործի համարը
<p>30. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված երրորդ իրավական հարցը հետևյալն է. Գ.Միքայելյանի ձերբակալման 72-ժամյա օրինական տևողությունը լրանալուց հետո դատարան ներկայացված՝ նրան կալանավորելու միջնորդությունը կարո՞ղ էր բավարարվել, եթե դատարանը գտնում էր, որ նրան կալանավորելու հիմքերն առկա են:</p>	<p>ԵԱԴԴ/0085/06/09</p>
<p>17. Սույն գործով Վճռաբեկ դատարանը պետք է պատասխանի հետևյալ հարցին՝ իրավաչափ էր արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից քննության առարկա դարձնել Ռ.Արշալույսյանին մեղսագրվող արարքի իրավաբանական որակման ճիշտ լինելը՝ ելնելով արարքի որակման հիմքում դրված ապացույցների գնահատումից, այն դեպքում, երբ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանն արագացված կարգ կիրառելու միջնորդությունը չի մերժել Ռ.Արշալույսյանի արարքի որակումը ճիշտ լինելու հիմքով:</p>	<p>ԱՐԱԴ/0021/01/08</p>

<p>20. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. արդյոք սույն գործի նախաքննության ընթացքում ձեռնարկվել են պատշաճ միջոցներ իր նկատմամբ կիրառված ֆիզիկական և հոգեկան բռնությունների վերաբերյալ Ա.Գզոյանի հայտարարությունների ստուգման և նրան ենթադրաբար խոշտանգած անձին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:</p>	<p>ԵԱԲԴ/0049/01/09</p>
<p>10. Սույն գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված առաջին իրավական հարցը հետևյալն է. ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը, իր 2010թ. մայիսի 12-ի որոշումը հիմնավորելով վերաքննիչ բողոքում չներկայացված փաստարկմամբ, խախտել է արդյոք ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ դատական ակտը վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում վերանայելու իրավական պահանջը:</p>	<p>ԼԴ/0001/11/10</p>
<p><i>Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.</i></p> <p>2) արդյոք իրավաբանական անձը կարող է ներկայացնել հայցային վաղեմության բաց թողնված ժամկետը վերականգնելու միջնորդություն:</p>	<p>ԵՄԴ/2775/02/14</p>

Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ իրավական հարցադրումներին.

1) արդյոք ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի 1-ին մասի կետով սնանկության գործով կառավարչին տրված լիազորությունն իրականացնելու համար անհրաժեշտ է գործարքի կեղծ լինելն ապացուցելու անհրաժեշտություն, 2) արդյոք ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձը տվյալ գործի շրջանակներում կարող է ներկայացնել հակընդդեմ հայց:

ԵԱՆԴ/1684/02/15

25. Սույն գործով մեղադրողի կողմից բարձրացված երկրորդ իրավական հարցը հետևյալն է. իրավասու է արդյոք նախաքննության մարմինն առերես հարցաքննություն կատարել վկայի և մեղադրյալի (կասկածյալի) միջև այն պայմաններում, երբ վերջինս, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հրաժարվում է ցուցմունք տալուց:

ԵԱԲԴ/0189/01/12

2. Կանոնի դուրս բերումը իրավավերլուծական աշխատանքի երկրորդ քայլն է: Կանոն ասելով նկատի ունենք այն իրավական նորմը, որը կարգավորում է իրավական խնդիրը: «Կանոն» եզրին պետք է մոտենալ լայն իմաստով: Ցանկացած դրույթ, որն ունի նորմատիվ բնույթ, համապատասխանում է կանոն եզրի պահանջին: Ռոմանագերմանական իրավական

համակարգում կանոնը հիմնականում օրենսդրական նորմ է: Անգլո-սաքսոնական իրավական համակարգում կանոնը առավելապես նախադեպային դրույթ է: Ինչպես գիտենք, երկու համակարգերում նկատվում է իրավական այս երկու աղբյուրների զուգամիտում: Հետևաբար, հարցին պետք է մոտենալ այնպես, ինչպես սահմանել է Եվրոպական դատարանը «օրենք» հասկացությունը մեկնաբանելիս: Յանկացած դրույթ, որը նորմատիվ բնույթ ունի, համապատասխանում է «օրենք» հասկացությանը: Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, կառավարության որոշումներով, գերատեսչական ակտերով, գերատեսչական կանոնակարգերով, նախադեպային որոշումներով սահմանված դրույթները, եթե ունեն նորմատիվ բնույթ, կարգավորում են կոնկրետ իրավահարաբերություններ, անձի վարքագիծ, կանխատեսելի են ու հրապարակված, համապատասխանում են «օրենք» հասկացությանը: Նման լայն մեկնաբանության դեպքում իրավաբանական գրականության մեջ երբեմն օրենք եզրը գրվում է մեծատառով՝ տարբերակելու համար այդ եզրի նեղ մեկնաբանությունից, որը սահմանափակվում է միայն օրենսդրի ընդունած իրավական ակտով:

Այսպիսով, Գործ 1-ում կանոնը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածն է, քանի որ դա միակ հոդվածն է, որը կարգավորում է վիրավորանքի կամ զրպարտության քաղաքացիաիրավական հարաբերությունները: Բացի այդ, դա հենց այն հոդվածն է, որը հայցվորը նշել է որպես իր հայցապահանջի հիմք: Ինչպես արդեն նշեցինք, ռոմանագերմանական իրավական համակարգում, որին պատկանում է ՀՀ համակարգը, իրավահարաբերությունները կարգավորող հիմնական կանոններն օրենսդրական նորմերն են: Ուստի, այդ առումով երբեմն կարելի է ընդամենը շարադրել օրենսդրական նորմ(եր)ը: Մինչդեռ անգլո-սաքսոնական համակարգում իրավաբանները կամ փաստաբանները ստիպված են ավելի հաճախ սինթեզել նորմը կամ կանոնը մի քանի նախադեպային որոշումներից: Գուցե Դուք կարիք կունենաք երբեմն դա անելու, եթե անհրաժեշտ

լինի սինթեզել որևէ կանոն Վճռաբեկ դատարանի մի քանի նախադեպային որոշումներից կամ Սահմանադրական դատարանի որոշումներից, սակայն Ձեզ միշտ օգնության կհասնի օրենսդրական նորմատիվ բազան, բացառությամբ այն նվազ դեպքերի, երբ առկա է օրենսդրական բաց: Այսպիսով, Գործ 1-ում կանոնը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածն է:

Սակայն այդ հոդվածը ծավալուն է և սխալ կլինի դա շարադրել ամբողջությամբ: Պետք է ընտրել կոնկրետ դրույթը, որը կարգավորում է իրավահարաբերությունը: Տվյալ դեպքում դա հոդվածի 3-րդ մասի դրույթն է, որն ամրագրում է զրպարտության օրենսդրական սահմանումը: Ըստ այդմ, զրպարտությունը «անձի վերաբերյալ այնպիսի փաստացի տվյալներ (statement of fact) հրապարակային ներկայացնելն է, որոնք չեն համապատասխանում իրականությանը և արատավորում են նրա պատիվը, արժանապատիվությունը կամ գործարար համբավը»:

Սակայն հայտնի է, որ այս դրույթը մեկնաբանվել է Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի որոշումներում: Սահմանադրական դատարանի որոշումն օրենքից բարձր ուժ ունի, և եթե այնտեղ կա զրպարտության մասին որևէ սահմանում, որը նորմատիվ բնույթ ունի, անպայման պետք է օգտագործել ու դրանից դուրս բերել կանոն: Տվյալ դեպքում դա Սահմանադրական դատարանի ՍԴՈ-997 որոշումն է: Վճռաբեկ դատարանը նույնպես մեկնաբանել է զրպարտություն հասկացությունը 1087.1 հոդվածի հիմքով: Հետևաբար, դա նույնպես կարևոր աղբյուր է կանոն սինթեզելու համար: Տվյալ դեպքում կարելի է օգտվել դատարանի 27/04/2012թ. թիվ ԵԿԴ/2293/02/10 գործով որոշումից:

Այսպիսով, համալիր վերլուծելով օրենսդրական նորմը Սահմանադրական դատարանի և Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումների հետ միասին, կարելի է այդ երեք աղբյուրներից սինթեզել չորս կետից բաղկացած հետևյալ կանոնը:

Գործ 1



Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասի հիմքով հայտարարությունը համարվում է զրպարտություն, եթե բավարարում է հետևյալ պայմաններին.

1. *հայտարարությունը փաստի մասին (փաստացի տվյալներ),*
2. *հայտարարությունը ներկայացվել է հրապարակային եղանակով,*
3. *հայտարարությունը չի համապատասխանում իրականությանը,*
4. *հայտարարությունն անձի պատիվը, արժանապատվությունը կամ գործարար համբավն արատավորող է:*

Վերը նշված չորս կետից բաղկացած կանոնը սինթեզվել է երեք աղբյուրներից. օրենսդրական նորմից, որը Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 3-րդ մասն է, Սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքից, որը ՍԴՈ-997 որոշումն է և Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/2293/02/10 որոշումից:

Այժմ կատարենք կանոնի դուրսբերում Գործ 2-ով: Սույն գործում իրավական խնդիրը մեղադրյալի հակընդդեմ հարցման իրավունքի իրականացման հարցն է այնպիսի հանգամանքում, երբ առանցքային վկան հարգելի կամ անհարգելի պատճառով չի ներկայացել դատարան՝ դատական քննությանը, և դատարանը հիմնվել է վկայի նախաքննական ցուցմունքի վրա: Նման խնդիրը կարգավորվում է սահմանադրական նորմով, միջազգային կոնվենցիաների նորմերով, օրենսդրական նորմով, վճռաբեկ դատարանի ու ՄԻԵԴ նախադեպային նորմերով: Հաշվի առնելով դա՝ կարող ենք դուրս բերել հետևյալ կանոնները:

Գործ 2



ՀՀ Սահմանադրության 67-րդ հոդվածի 3-րդ մասը, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 3-րդ մասի Ե-կետը սահմանում են մեղադրյալի՝ իր դեմ ցուցմունք տված անձին դատարանում հարցաքննելու, հակընդդեմ հարցման ենթարկելու իրավունքը:

ՄԻԵԴ-ը սահմանում է, որ այս կանոնից կարելի է նահանջել, այսինքն՝ հիմնվել նախաքննական ցուցմունքի վրա հետևյալ երեք պայմանների առկայության դեպքում.

1. եթե վկայի չներկայանալու համար առկա է հարգելի պատճառ ու դատարանը ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները նրա ներկայությունը ապահովելու համար,
2. եթե վկայի նախաքննական ցուցմունքը միակ կամ վճռորոշ ապացույց չէ,
3. եթե կան վկայի նախաքննական ցուցմունքի արժանահավատությունը հաստատող բավարար հակաշոշոք գործոններ

(Մանուսարյանն ընդդեմ Հայաստանի,
թիվ 35688/11, 24/11/16, §§ 45-60)

Եվ հետևյալ կանոնը՝ ի հավելումն.

Գործ 2



ՀՀ վճռաբեկ դատարանը սահմանել է. *հակընդդեմ հարցման (կոնֆրոնտացիայի) իրավունքով չսպահովված ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելը*

քրեադատավարական օրենքի էական խախտում չի կազմի, եթե այդ ապացույցը վճռական կշիռ չունի անձի մեղքը հաստատող ապացույցների զանգվածում: Այլ կերպ՝ առանց հակընդդեմ հարցման՝ ապացույցը մեղադրական դատավճռի հիմքում դնելու արգելքը բացարձակ բնույթ չի կրում: Ուստի այս պարագայում հանրային և մասնավոր իրավաչափ շահերի հավասարակշռությունը հնարավոր է ապահովել հանրային շահերի առավել մեծ ընդգրկմամբ (Համայակ Սահակյանի գործով Վճռաբեկ դատարանի ԼԴ/0212/01/10 որոշում, § 23): Այս օրինակում վկայակոչվեցին Սահմանադրության և միջազգային կոնվենցիաների ընդհանուր բնույթի նորմեր և Եվրոպական դատարանի ու Վճռաբեկ դատարանի կոնկրետ նորմեր: Եվրոպական դատարանը սահմանել է երեք մասից բաղկացած կանոն, որի մեկ կետը սահմանվել է նաև Վճռաբեկ դատարանի մոտ (ապացույցի գնահատմամբ «միակ» կամ «վճռորոշ» կանոնը): Ընդ որում, Եվրոպական դատարանի սահմանած երեք կանոններն էլ ավելի մանրամասնորեն բաղդատվում են նույն նախադեպային որոշման մեջ

*(Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի,
թիվ 35688/11, 24/11/16, §§ 45-60):*

Այսպիսով, դատավորը կարող է ընտրել սահմանադրական և կոնվենցիոն ընդհանուր բնույթի նորմերը, այնուհետև սահմանել առավել կոնկրետ կանոններ Վճռաբեկ դատարանի մեկ կամ Եվրոպական դատարանի երեք նորմերի հիման վրա: Բնականաբար, առավել ապահով է հիմնվել Եվրոպական դատարանի սահմանած երեք նորմերից բաղկացած կանոնի վրա՝ հատկապես հաշվի առնելով, որ Մանուչարյանի գործում այդ կանոններն էլ ավելի մանրամասնորեն են բաղդատվում՝ հաջորդ փուլի վերլուծության համար ապահովելով որոշակիություն, կանխատեսելիություն, արդարադատության իրականացման

տեսանելիություն, դատական ստուգման ամբողջականություն ու մանրամասնություն):

Իրավական խնդրի և կանոնի դուրսբերման, սինթեզման կամ բաղդատման շատ օրինակներ կարելի է գտնել Վճռաբեկ դատարանի որոշումների 4-րդ բաժնում: Վճռաբեկ դատարանը հետևյալ կերպ է կատարում իրավական խնդրի ու կանոնի դուրսբերում: Որպես կանոն, իրավական խնդիրը ձևակերպելուց հետո, որոնց օրինակները բերված են վերևում, Վճռաբեկ դատարանն ըստ աստիճանակարգության նախ շարադրում է սահմանադրական, միջազգային պայմանագրային կամ կոնվենցիոն, օրենսդրական նորմատիվ դրույթներ: Այնուհետև դատարանը հղում է կատարում Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կամ միջազգային որևէ դատական ակտի նախադեպային դրույթների վրա: Այնուհետև դատարանը, անհրաժեշտության դեպքում, վկայակոչում է փափուկ օրենքների նորմատիվ բնույթի աղբյուրներ, օրինակ՝ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կամ Խորհրդարանական վեհաժողովի որևէ հանձնարարական կամ բանաձև, միջազգային որևէ հեղինակավոր կազմակերպության նորմատիվ բնույթի եզրահանգում:

**Օգտագործեք
Գրականության ցանկից՝ Վարժություն 1, 2, 3 և 4-ը:**

ՄԻԵԴ-ն ունի դատական ակտի հստակ կառուցվածք, սակայն IRAC-ի բոլոր կանոններով հետևողականորեն չի առաջնորդվում: Առավել հետևողական է երկրորդ քայլում՝ կանոնը դուրս բերելիս: Դատարանը նախ շարադրում է կողմերի դիրքորոշումները, այնուհետև շարադրում է կանոնը կամ կանոնները, որից հետո անցնում է վերլուծության փուլին՝ կիրառելով կանոնը փաստերի նկատմամբ:

Կանոնը շարադրելիս դատարանը հիմնականում առաջնորդվում է իր նախկին որոշումներով: Հիմնականում կանոնը շարադրվում է մի քանի պարբերությամբ՝ սկսելով ընդհանուր բնույթի նորմերից և աստիճանաբար անցում կատարելով ա-

ռավել մասնավոր կանոնների՝ ամբողջությամբ սպառելով մինչ այդ սահմանված բոլոր կանոնները տվյալ իրավահարաբերության մասին: Այդպիսով, դատարանը կատարում է կանոնի բաղդատում՝ շարադրելով բոլոր պարզ ու բարդ, ընդհանուր ու

Վարժություն 1-ում դեղին գույնով նշված է իրավական խնդիրը, կապույտ գույնով՝ կանոնը, կանաչ գույնով՝ վերլուծությունը, մանուշակագույնով՝ լուծումը:

մասնավոր նորմերը տվյալ իրավահարաբերության մասին: Դա անելիս դատարանը հետևողականո-

րեն հղում է կատարում իր նախադեպային որոշումներին: Երբեմն կանոնի շարադրանքը կարող է լինել մի քանի էջ՝ հատկապես, եթե դատարանը կայացնում է պիլոտային որոշում (տես, այս իմաստով, *Մանուշարյանն ընդդեմ Հայաստանի*, թիվ 35688/11, §Տ 45-60): Այդ դեպքում դատարանն ի մի է բերում իր ողջ նախադեպային իրավունքը, այդ թվում՝ նաև նախկին զարգացումները տվյալ իրավական հարցի վերաբերյալ:

Քանի որ արդեն սահմանել ենք իրավական խնդիրը և կանոնը, կարող ենք անցնել երրորդ փուլին՝ վերլուծությանը:

 **Գրականություն**

- | | |
|------------------|---|
| 1. Սահիկ | 1 Իրավական-վերլուծական IRAC մեթոդական համակարգը: Իրավական խնդիր և Կանոն |
| 2. Վարժություն 1 | Վճռաբեկ դատարանի որոշում
ԵԱՔԴ/0020/11/12 |
| 3. Վարժություն 2 | Վճռաբեկ դատարանի որոշում
ԵԱՔԴ/0020/11/12 |
| 4. Վարժություն 3 | Վճռաբեկ դատարանի որոշում
ԿԴ-3/0232/02/13 |
| 5. Վարժություն 4 | Վճռաբեկ դատարանի որոշում
ՎԴ/1115/05/16 |



ԴԱՍ 3 - 4

Իրավական-վերլուծական IRAC մեթոդական համակարգի ուսուցանում

Դաս 3 Իրավական վերլուծության
ռազմավարություն՝ տեքստուալիզմ,
ռեալիզմ, օրիգինալիզմ 2 ժամ

Դաս 4 Իրավական մեկնաբանություն 2 ժամ



Դասի նպատակն է դատական ակտերի հիմնավորման ու պատճառաբանման IRAC ունիվերսալ մեթոդական համակարգի ներդրումը և տարածումը դատական պրակտիկայում, որը կնպաստի պատճառաբանված, պարզ ու հստակ դատական ակտեր ունենալուն: Այդ ընդհանուր նպատակի ներքո՝ նախատեսվում է սույն դասընթացում ունկնդիրներին ծանոթացնել IRAC համակարգի երրորդ՝ «վերլուծություն», և չորրորդ՝ «եզրահանգում» իրավավերլուծական փուլերի հետ:



Ակնկալվող արդյունքները.

- ունկնդիրները կսովորեն վերհանված իրավական խնդրի և կանոնի հիման վրա կատարել վերլուծություն,
- կատարել և ամրագրել վերլուծության պարզաճ եզրահանգումներ,
- կազմել գործերի սեղմագրեր՝ անդրադառնալով IRAC-ի բոլոր բաղադրարարներին,

- ընդհանուր պատկերացում կունենան իրավական մեկնաբանությունների ակտիվ և պասիվ հինգ հիմնական եղանակների մասին ու կսովորեն, թե ինչպես դրանք կիրառել IRAC վերլուծության փուլի համար:



Ինչպես նշել ենք, «IRAC» գործընթացի հաջորդ քայլը վերլուծությունն է: Սա իրավական հիմնավորման այն մասն է, որտեղ բացատրում եք, թե **ինչպես** և **ինչու** եք կայացնում կոնկրետ այս կամ այն որոշումը: Դատական ակտը պատճառաբանելու պահանջի էությունը կայանում է նրանում, որ դատական ակտն ընթերցող ցանկացած անձ պետք է հասկանա, թե ինչպես է դատավորը հանգել այս կամ այն եզրակացությանը և ինչու է հանգել այդ եզրակացությանը: Ուստի, զուտ իրավական աղբյուրի վկայակոչումը բավարար չէ, անհրաժեշտ է նաև բացատրել, թե *ինչու* է վկայակոչվել տվյալ աղբյուրը: Նմանապես, գործի լուծումը կամ ապացույցի պարզ շարադրանքը բավարար չէ: Անհրաժեշտ է ցույց տալ, թե ինչպես է դատարանը հանգել լուծմանը կամ ինչպես է դատարանը գերապատվություն տվել մի ապացույցի և անարժանահավատ կամ նվազ վերաբերելի համարել այլ ապացույց: Որպես օրինակ կարելի է մատնանշել ՄԻԵԴ-ի վճիռը **Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի (թիվ 35688/11)** դատական գործը: Այդ գործում իրավական խնդիրը նրանում էր, թե արդյոք մեղադրական դատավճռում ապացույցների գնահատման եղանակը և, արդյունքում, դատական ակտի պատճառաբանվածությունը կարող էր հակակշիռ հանդիսանալ վկայի առանցքային ցուցմունքը հակընդդեմ հարցման եղանակով ստուգելու անհնարինության դատավարական բացին, քանի որ դատարանը չէր ապահովել առանցքային, միակ ականատես վկայի ներկայությունը դատական քննությանը, որպեսզի մեղադրյալը հնարավորություն ունենար իրականացնել հակընդդեմ հարցման իր հիմնարար իրավունքը: ՄԻԵԴ-ը եզրահան-

գեց հետևյալը (տե՛ս վճռի 58-րդ կետում)։

Գործ



«... դատարանի վճիռը չէր պարունակում իրեն ներկայացված ապացույցների վերլուծություն, ինչպես նաև որևէ փոքր նշում այն մասին, որ դատարանը տեղյակ է եղել վկայի չստուգված ցուցմունքների, այդ թվում՝ Ք. Մ.-ի ցուցմունքի նվազ ապացուցողական արժեքի մասին: **Բոլոր ապացույցները պարզապես ներկայացվել են որպես դիմումատուի կողմից հանցագործության կատարման ապացույց՝ առանց վկայի չստուգված ցուցմունքի հավաստիության գնահատման** (տե՛ս վերևում՝ 26-րդ պարբերությունը): Հետևաբար, Դատարանը գտնում է, որ դատաքննություն անցկացնող դատարանը պատշաճ կարգով չի քննել Ք. Մ.-ի ցուցմունքի հավաստիության հարցը:

Ըստ ՄԻԵԴ-ի, Լոռու մարզի առաջին ատյանի դատարանը մեղադրական դատավճռում չէր կատարել ապացույցների հետազոտություն՝ ըստ յուրաքանչյուր ապացույցի ընդունելիության, վերաբերելիության, արժանահավատության և բավարար համակցության: Ավելին, դատարանը չէր կիրառել ապացույցները փաստերի նկատմամբ: Այսինքն՝ դատարանը չէր կատարել IRAC համակարգի երրորդ քայլը: Դրա փոխարեն դատարանը պարզապես շարադրել էր բոլոր ապացույցները ու այնուհետև վերացական կերպով նշել, որ դրանցով հաստատվում էր մեղադրյալի մեղքը՝ սպանությունը: Իրավավերլուծական նման ռազմավարությունը չէր պատասխանում վերը նշված երկու հարցերին՝ «**ինչպես**»-ին և «**ինչու**»-ին: Դատական ակտի թերի պատճառաբանությունը հանգեցրեց նրան, որ ՄԻԵԴ-ը արձանագրեց խախտում:

Վերը նշված օրինակի լույսի ներքո կարևոր է իմանալը, որ

իրավավերլուծական ռազմավարության երեք հիմնական տեսակներ կան, որոնք են տեքստուալիզմը, ռեալիզմը և օրիգինալիզմը:

■ **Իրավական վերլուծության ռազմավարություն՝ տեքստուալիզմ, ռեալիզմ, օրիգինալիզմ**

Տեքստուալիզմն իրավական վերլուծության եղանակ է, ըստ որի օրենսդրական նորմի իմաստը բացահայտելու նպատակով իրավական տեքստի վերլուծությունը կատարվում է միայն տեքստի՝ օրենքի, իրավական խնդրի, կանոնի սովորական իմաստի շրջանակներում (բառն ինքն իր մեջ): Այս ռազմավարությունը հատուկ է ռոմանագերմանական իրավական համակարգի երկրներին, որտեղ իրավունքն ամբողջությամբ կողիֆիկացված է, և ակնկալվում է, որ օրենսդիրը տվել է սպառիչ պատասխան կամ կարգավորում բոլոր հնարավոր իրավահարաբերությունների համար, ու դատավորից ընդամենն ակնկալվում է կիրառել նորմը փաստերի նկատմամբ ու հանգել գործով լուծմանը: Ինչպես ֆրանսիական ասացվածքն էր ասում. դատավորն օրենքի բերանն է:

Ռեալիզմը տեքստուալիզմի հակառակ տեսությունն է, ըստ որի՝ իրերը պետք է մեկնաբանել ու իրերին պետք է լուծում տալ՝ ելնելով ներկա օրվա դրությունից, ժամանակակից պատկերացումներից, հասարակական հարաբերությունների ներկա վիճակից, որը հնարավորություն կտա իրավական փաստաթուղթը, այդ թվում՝ նաև դատական ակտը, պահել «ժամանակակից» վիճակում և դա կիրառել՝ ելնելով իրական, ռեալ իրավիճակից ու անհրաժեշտությունից:

Օրիգինալիզմը սահմանում է, որ իրավական վերլուծությունը պետք է այնպես կատարել, որ բացահայտվի իրավաստեղծողի առաջնային կամքը, նպատակը կամ լուծումը չհակասի իրավաստեղծողի սկզբնական նպատակին՝ անկախ ներկա օրվա զարգացումներից:

ՄԻԵԴ-ը հետամուտ է բոլոր երեք սկզբունքներին/ռազմավարություններին՝ դատական ակտեր կազմելիս: Դատարանը հետևողականորեն վկայակոչում է իր նախկին որոշումները՝ այդպիսով ապահովելով իրավական տեքստերի վերլուծության միօրինակություն, շարունակականություն, հետևողականություն, որոնք կարող են անփոփոխ կիրառվել մի քանի տասնամյակ շարունակ: Դա տեքստուալիզմի դրսևորման ապացույց է: Միննույն ժամանակ Եվրոպական կոնվենցիայի երկու հիմնարար սկզբունքները՝ Կոնվենցիան՝ որպես «կենդանի» իրավական փաստաթուղթ, և Կոնվենցիայով պաշտպանված իրավունքների «իրական» ու «գործնական», այլ ոչ թե «վերացական» ու «պատրանքային» լինելը բխում են ռեալիզմի բնույթից: Եվ, վերջապես, երբեմն Եվրոպական դատարանը Կոնվենցիայի որևէ տերմին մեկնաբանելիս վկայակոչում է Կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերը (Travaux Preparatoires)՝ բացահայտելու համար Կոնվենցիայի հիմնադիրների սկզբնական նպատակը տվյալ տերմինը սահմանելիս: Այդուհանդերձ, Կոնվենցիայի մեկնաբանության, իրավավերլուծական ռազմավարության հիմնական բնույթը ռեալիզմն է, կամ, ինչպես գրականության մեջ հաճախ նշվում է՝ թելեոլոգիական մեկնաբանումը, երբ իրավական նորմի իմաստը բացահայտվում է ըստ այդ նորմի կիրառության նպատակի: Այլ կերպ գրականության մեջ դա կոչվում է նաև նպատակային մեկնաբանության եղանակ:

«Հ իրավական համակարգում բոլոր երեք ռազմավարություններն էլ կիրառվում են, իսկ իրավական նորմերը մեկնաբանելիս երեք սկզբունքների կիրառելիության հնարավորությունը սահմանված է օրենքով: Այսպես՝ Իրավական ակտերի մասին օրենքի 41-րդ հոդվածով սահմանված է.

«1. Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ լինելով դրանում պարունակվող բառերի և

արտահայտությունների փառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համարեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:


Օրենսդրական այս կարգավորումը ներառում է տեքստուալիզմ («ելնելով դրանում պարունակվող բառերի ու արտահայտությունների տառացի նշանակությունից»), և օրիգինալիզմ (*հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը*): Մեծ վերապահումով կարելի է ասել, որ կարգավորումը ներառում է նաև ռեալիզմ (*տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից*): Ռեալիստական մեկնաբանման դեպքում կիրառողը, փաստորեն, դուրս է գալիս օրենսդրի կամքից՝ հիմնավորելով, որ այս պահին օրենսդիրն այլ որոշում կընդուներ: Իսկ եթե մեկնաբանումը բխի օրենսդրի ամրագրած սկզբունքներից, կիրառողը դուրս չի գա օրենսդրի կամքից:

Ազգային դատարանները մեծամասամբ հարում են տեքստուալիզմի սկզբունքներին իրավավերլուծական գործունեություն իրականացնելիս՝ կիրառելով նորմը փաստերի նկատմամբ կամ մեկնաբանելով իրավական նորմը կամ որևէ իրավահարաբերություն: Դա հատկապես վերաբերում է առաջին աստիճանի դատարաններին, որոնք փաստի, այլ ոչ թե իրավունքի դատարաններ են:

ՀՀ դատարանների համար իրավունքի հիմնական աղբյուրն օրենսդրական ակտերն են: Ապացույցների վերլուծություն կատարելիս դատարանները որպես ուղեցույց օգտվում են հիմնականում ապացույցների ընդունելիության, վերաբերե-

լիության, արժանահավատության և բավարար համակցության օրենսդրական ձևակերպումներից, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումներից ու մեկնաբանություններից, որոնք փաստացի կիրառվում են որպես նախադեպային դրույթներ: Փաստերը գնահատելիս նույնպես դատարանները հիմնականում օգտվում են օրենսդրական նորմի տեքստային իմաստից: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը և Վճռաբեկ դատարանը բազմաթիվ դատական ակտերով օրենսդրական նորմերը մեկնաբանել են ռեալիզմի և օրիգինալիզմի սկզբունքներից ելնելով: Ավելին, առաջին ատյանի դատարանները նույնպես կիրառել են իրավավերլուծական նման ռազմավարություններ՝ որոշումներ, վճիռներ ու դատավճիռներ կայացնելիս:

Այժմ ներկայացնենք օրինակներ դատական որոշումների վերլուծական մասերից, որոնցում դատարանները կիրառել են



օրենքը փաստերի նկատմամբ իրավավերլուծական տարբեր ռազմավարություններով: Ձեր գրադարանի Վարժություն 2-ում ներկայացված է Վճռաբեկ դատարանի որոշումը ԵԱԲԴ/0020/11/12 քրեական գործով: Տեքստի 1-ին, 2-րդ և 3-րդ բաժինները կրճատված են, քանի որ դրանք վարժության համար կարևորություն չեն ներկայացնում: 4-րդ բաժինը ներկայացված է ամբողջությամբ: Վարժություն 2-ի տեքստի կարմիր լուսանցքից աջ կատարված են նշումներ դատական

պարտավոր էր գործին մասնակցող անձին տրամադրել Վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինակը, դատական նիստի ձայնային արձանագրության կրիչը և դրա համառոտագրման օրինակները:

Այս եզրահանգմանը հանգել է 19-րդ կետի **վերլուծության** և 18-րդ կետի **կանոնի** հիման վրա: Կրկին դատարանն այս խնդրի առանձին ձևակերպում չի կատարել 14-րդ կետում: Խնդրի ձևակերպումը կարող էր լինել հետևյալը. արդյոք դատարանը պարտավոր էր գործին մասնակցող անձին տրամադրել Վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինակը, դատական նիստի արձանագրության կրիչը և դրա համառոտագրման օրինակները: Եվ վերջապես, 23-րդ կետում դատարանը կատարել է մասնակի ու, այնուհետև, հավաքական եզրահանգում այն մասին, որ խախտվել է դատավարության մասնակցի մրցակցային դատավարության իրավունքը: Այդ եզրահանգմանը հանգել է 22-րդ կետի վերլուծության և 21-րդ կետի կանոնի հիման վրա, սակայն նաև նշել է, որ եզրահանգման համար հիմք են ծառայել 14-րդ կետից մինչև 22-րդ կետը շարադրված փաստարկումները: Խնդիրը կայանում է նրանում, որ դատարանը 14-րդ կետում իրավական խնդիրը սահմանել է հավաքական կերպով՝ երկրորդ և երրորդ խնդիրներն ածանցելով առաջին խնդրից: Կարծում ենք, որ հստակության տեսանկյունից առավել նպատակահարմար կլիներ երեք խնդիրները ձևակերպել առանձին: Առաջարկում ենք հետևյալ տարբերակը.

- *արդյոք Վերաքննիչ դատարանը թույլ է տվել խախտում՝ հեռացնելով պաշտպանին գործի վարույթից այն դեպքում, երբ քրեական գործի քննության վարույթը գտնվում էր նախաքննության, այլ ոչ թե դատաքննության փուլում,*
- *եթե ոչ, արդյոք Վերաքննիչ դատարանը պարտավոր էր գործին մասնակցող անձին տրամադրել Վերաքննիչ դատարանի դատական ակտի օրինակը,*

դատական նիստի ձայնային արձանագրության կրիչի և դրա համառոտագրման օրինակները,

- եթե այո, արդյոք դատարանի նշված գործողությունները հանգեցրել են դատավարության մասնակցի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 23-րդ հոդվածով ամրագրված՝ մրցակցության և համապատասխանաբար նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Վվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված՝ զենքերի հավասարության սկզբունքները:

Այժմ ուսումնասիրենք, թե իրավավերլուծական ինչ ռազմավարություն է կիրառել Վճռաբեկ դատարանը վերը նշված գործով: Կապույտ գույնով նշված հատվածներում տեսնում ենք, որ դատարանը հղում է կատարել Քրեական դատավարության օրենսգրքի յոթ հոդվածների տարբեր դրույթների և Վճռաբեկ դատարանի երկու նախադեպային որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումների վրա: Կատարվել են տեքստային մեջբերումներ: Բացակայում է որևէ վերլուծություն օրենսդրական նորմերի որևէ հատուկ իմաստի, բովանդակության, օրենսդրի կամքի բացահայտման ուղղությամբ, որի առկայության դեպքում կարելի կլիներ ասել, որ դատարանը կիրառել է օրիգինալիզմ: Բացակայում է նաև որևէ վերլուծություն նախադեպային դրույթների և օրենսդրական նորմերի նորովի, ժամանակակից, իրավաստեղծ, հասարակական հարաբերությունների ներկա լույսի ներքո մեկնաբանելու մասին, որի դեպքում հնարավոր կլիներ պնդել, որ դատարանը կիրառել է ռեալիզմ: Հետևաբար, կարելի է պնդել, որ դատարանը կիրառել է տեքստուալիզմ՝ օրենսդրական և նախադեպային դրույթները մեկնաբանելով իրենց սովորական իմաստով:

Հաջորդ բաժնում կանդիդատանք մեկնաբանման մի քանի սկզբունքների ու հնարքների, որոնք, որպես կանոն, կիրառվում են IRAC-ի վերլուծական բաժնում:

■ **Իրավական մեկնաբանության մեթոդներ**


Այս բաժնում կանդրադառնանք դատական ակտերի մեկնաբանման մի քանի հնարքների ու սկզբունքների: Բոլորին չենք անդրադառնա, քանի որ դրանք շատ են ու բազմազան: Կանդրադառնանք հիմնականում այն սկզբունքներին ու հնարքներին, որոնք համեմատաբար հաճախ են կիրառվում պրակտիկայում: Այդ իմաստով կուսումնասիրենք ՀՀ Վճռաբեկ դատարանի, Վերաքննիչ դատարանների ու Եվրոպական դատարանի դատական ակտերը:

Որպես ուղեցույց օգտվենք Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 41-րդ հոդվածից, որը սահմանում է նորմատիվ իրավական ակտի նորմի մեկնաբանության սկզբունքները: Ըստ այս հոդվածի՝

Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների փառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համարեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, փվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ փվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Եթե ավելի պարզեցված ներկայացնենք վերը նշված տեքստը, ստացվում է, որ նորմը մեկնաբանվում է երեք տիրույթներում: Օրենսդրի կամքի բացահայտման նպատակով (հիմնականում նորմատիվ ակտերն ընդունվում են օրենսդիր մարմնի կողմից, սակայն կարող են ընդունվել նաև կառավարություն, կարգավորող և այլ մարմինների կողմից)՝ հաշվի առնելով բառերի ու արտահայտությունների **սովորական**

Խմաստը, հաշվի առնելով **համատեքստը**, որում օգտագործվում են տվյալ բառերը կամ արտահայտությունները, և հաշվի առնելով նորմատիվ ակտի **ընդհանուր սկզբունքները**, որոնք, որպես կանոն, սահմանված են ընդհանուր բաժնում և/կամ փաստաթղթի նախաբանում (պրեամբուլա):



Այդ երեք տիրույթները տարանջատված չեն, դրանք որոշակիորեն փոխհարաբերվում են, ու եթե դա ներկայացնենք սխեմատիկ, կունենա պատկերում ներկայացված տեսքը, որտեղ բոլոր երեք տիրույթները որոշակիորեն փոխհատվում են, բայց բոլորը գտնվում են օրենսդրի կամքի ընդհանուր համատեքստում և չեն կարող դուրս

գալ այդ համատեքստից, իսկ դուրս գալու դեպքում անհրաժեշտություն կլինի փոխել օրենքը և դա հարմարեցնել ներկա դրության պայմաններին:

Այժմ ներկայացնենք մեկնաբանման մի քանի եղանակները, որոնք շոշափում են վերը նշված չորս տիրույթներն առանձին-առանձին կամ մեկը կամ մի քանիսը՝ միասին:

Կենդանի իրավական փաստաթուղթ. մեկնաբանման այս եղանակը կիրառում է ՄԻԵԴ-ը: Դա նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի հիմնարար սկզբունք է: Դրա նպատակն է մեկնաբանությամբ իրավական փաստաթղթի բառերին ու արտահայտություններին ժամանակակից իմաստ ու բովանդակություն հաղորդելը, որպեսզի իրավական փաստաթուղթը «չհնանա», արտահայտի ժամանակակից հասարակական զարգացումները ու պահանջները: Ստորև նշված օրինակում Եվրոպական դատարանը Կոնվենցիայի շրջանակներում ներմուծեց նոր իրավունք.

Բայաթյանն ընդդեմ Հայաստանի (ՄԻԵԴ) 2011թ.



102. Դատարանն այս կապակցությամբ կրկին նշում է, որ Կոնվենցիան «կենդանի փաստաթուղթ» է, որը պետք է մեկնաբանվի ներկայիս հանգամանքների լույսի ներքո և ներկայումս ժողովրդավարական պետություններում գերակայող գաղափարների հիման վրա: ...Քանի որ Դատարանը մարդու իրավունքների պաշտպանության առաջնային և կարևոր համակարգ է, այն պետք է հաշվի առնի Պայմանավորվող պետությունների փոփոխվող հանգամանքները և չափանիշների սահմանման համար արձագանքի, օրինակ, ցանկացած ընդհանուր զարգացման...:

ՄԻԵԴ-ը սահմանեց նոր իրավունք, ըստ որի՝ անձը կարող էր ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքների հիմքով, ու նոր իրավունքը պետությունների համար սահմանում էր այլընտրանքային ծառայության մասին օրենք ընդունելու պարտականություն, որը չպետք է լիներ զինվորական բնույթի և չպետք է գտնվեր ռազմական կառույցների վերահսկողության ներքո: Մինչ այս վճիռը, որը կայացվեց 2011 թվականին, Եվրոպական դատարանը տասնամյակներ շարունակ մերժել է նույնանման հիմքով գանգատներ տարբեր պետություններից: Հաշվի առնելով, որ նշված իրավունքն արդեն ընդունվել էր ԵԽ անդամ գրեթե բոլոր պետությունների կողմից և այդ հարցի վերաբերյալ ձևավորվել էր ընդհանուր եվրոպական կոնսենսուս, Եվրոպական դատարանը որոշեց, որ ժամանակակից հասարակական հարաբերություններն այլևս պարտավորեցնում էին կոնվենցիայով նույնպես սահմանել այդ իրավունքը, հակառակ դեպքում Կոնվենցիան կարժեզրկվեր որպես ժամանակի հետ քայլող, ժամանակակից իրավական փաստաթուղթ: Վերջում ավելացնենք, որ եթե ազգային դատարանը որոշեր նույնանման որոշում կայացնել մինչև ՄԻԵԴ-ը, ապա դա հնարավոր կլիներ՝

հիմնվելով իրավական ակտի ընդհանուր սկզբունքների կամ իրավունքի ճյուղի սկզբունքների վրա:

Ինքնավար (ավտոնոմ) մեկնաբանության եղանակը նույնպես կիրառվում է Եվրոպական դատարանի կողմից այն դեպքում, երբ դատարանը ցանկանում է Կոնվենցիայի որևէ եզրույթը մեկնաբանել յուրովի, ինքնուրույն՝ անկախ այն հանգամանքից, որ նույն եզրույթն այլ կերպ է մեկնաբանվում Կոնվենցիայի անդամ պետությունների ազգային համակարգում: Վճռաբեկ դատարանը երբեմն հղում է կատարում ՄԻԵԴ-ի նման մեկնաբանություններին, երբ փաստերը և իրավունքի հարցերը համապատասխանում են:

Գազիկ Միքայելյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշում **ԵԱԴԴ/0085/06/09 գործով**



«21...Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիման վրա՝ «քրեական մեղադրանք» հասկացությունը պետք է հասկացվի ոչ թե *ձևական* (փաստաթղթային), այլ *բովանդակային* (գործնական) իմաստով (*Դեվեերն ընդդեմ Բելգիայի (Deweert v. Belgium)* գործով վճիռ, 1980թ. փետրվարի 27, գանգատ թիվ 6903/75, կետ 44): Այսինքն՝ անձի նկատմամբ «մեղադրանքի» առկայության մասին կարող է վկայել նաև այնպիսի միջոցներ ձեռնարկելը, որոնք ենթադրում են հանցագործության մեջ կասկածանքի առկայություն, ինչպես նաև էականորեն ներգործում են կասկածվող անձի դրության վրա...»:

Այս որոշմամբ Վճռաբեկ դատարանը, հիմնվելով Եվրոպական դատարանի «մեղադրանք» հասկացության ինքնավար մեկնաբանության վրա, քրեական դատավարություն ներմուծեց «մեղադրանք» հասկացության նոր իմաստ, որը կտրուկ տարբերվում էր մինչ այդ գոյություն ունեցող տեսական ու կի-

րառական հիմքերից: Ներկայումս պրակտիկայում մեծամասամբ առաջնորդվում են վերը նշված սահմանմամբ, թեև դրան հակասող մի շարք նորմեր Քրեական դատավարության օրենսգրքում դեռ ֆորմալ կերպով մնում են ուժի մեջ: Նոր քրեական դատավարության օրենսգրքի ընդունումով «մեղադրանք» հասկացությունն արդեն համահունչ կլինի վերևի մեկնաբանությանը: Այսպիսով, Վճռաբեկ դատարանը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «մեղադրանք» եզրը սահմանեց նոր մեկնաբանությամբ՝ ներմուծելով Եվրոպական դատարանի կողմից դրան տրված ինքնավար իմաստը/մեկնաբանությունը:

**Տե՛ս Գրադարանում՝
Վարժություն 7:**

Օրենսդրի կամքի բացահայտում. մեկնաբանության այս եղանակը կիրառվում է, երբ օրենքի փոփոխության արդյունքում փոփոխվել է իրավական նորմի նկարագիրը կամ դատական պրակտիկայի ուժով նորմի առաջնային բովանդակությունն աստիճանաբար փոփոխության է ենթարկվել ու նշված երկու պատճառներով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջացել կոնկրետ գործով բացահայտել այդ նորմի առաջնային իրավական բովանդակությունն այն պահի դրությամբ, երբ այդ նորմն ընդունվեց

Տե՛ս գրականության ցանկում՝ ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանությունների ժողովածու», էջ 35:

օրենսդրի կողմից: Արդեն հասկանալի է, որ մեկնաբանման այս եղանակը հարում է օրիգինալիզմի ռազմավարությանը: Վերևում արդեն նշվեց, որ Եվրոպական դատարանը երբեմն դիմում է մեկնաբանման այս եղանակին, երբ ուսումնասիրության առարկա է դարձնում Կոնվենցիայի նախապատրաստական փաստաթղթերը (Travaux Preparatoires)՝ բացահայտելու համար Կոնվենցիայի հիմնադիրների սկզբնական նպատակը տվյալ տերմինը սահ-

մանելիս: Մեկնաբանման այս եղանակը կիրառել է նաև Վճռաբեկ դատարանը Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասի (Վ. Հովակիմյանի վերաբերյալ ՎԲ-125/07 որոշում) և Քրեական օրենսգրքի 21 և 22-րդ հոդվածների իրավական բովանդակությունը մեկնաբանելիս (Ա. Պապիկյանի վերաբերյալ ՎԲ-149/07 որոշում): Առաջին օրինակում համեմատելով նախկին օրենսգրքի և ներկա օրենսգրքի համարժեք նորմերը՝ հանգել է այն եզրահանգման, որ դրանց միջև կար տարբերություն, որն էական էր, քանի որ տարբերությունը ոչ թե խմբագրային էր, այլ ուներ քրեաիրավական բովանդակություն: Մասնավորապես, նախկին տեքստով օրենսդիրը որպես խուլիգանության հանցակազմ սահմանել էր հանցագործության համար օգտագործվող գործիքը՝ դրա համար *հարմարեցված* լինելու օբյեկտիվ հատկանիշը, իսկ ներկա տեքստում այդ հատկանիշը բացակայում էր, որից բխեցվել էր, որ օրենսդրի կամքն էր հանցակազմի շրջանակը լայնացնել ու դրանով ընդգրկել արարքներ, որոնք կարող էին կատարվել նույնիսկ առանց գործիքը հարմարեցված լինելու, օրինակ՝ գետնից վերցված քարը: Ըստ էության, դատարանը կիրառել է վերլուծության դեդուկտիվ մեթոդ՝ համեմատելով երկու տեքստերը և դրանցից վեր հանելով տարբերությունը. փաստերն այստեղ կարևոր չէին: Երկրորդ օրինակում դատարանը կիրառել է փաստարկման բացառման կանոնը. եթե տվյալ հանգամանքներում երկու իրավակարգավորումներից մեկը չէր կարող գործել, ուրեմն ստացվում է, որ օրենսդրի կամքն էր, որ գործեր մյուսը, քանի որ կանխավարկածի ուժով բացառվում է, որ օրենսդիրը սահմանած լինել մի կարգավորում, որը չէր կարող գործել:

Այվազյանի չափորոշիչը սահմանվել է Վճռաբեկ դատարանի կողմից, ըստ որի՝ ՀՀ դատարանները ՄԻԵԴ որոշումները կիրառելիս կամ կիրառումը մերժելիս չեն կարող բավարարվել ՄԻԵԴ որոշման և քննության առարկա գործի փաստերի պարզ համադրմամբ, այլ յուրաքանչյուր դեպքում պետք է պարզեն, թե վկայակոչվող գործի և քննության առարկա գործի փաստական հանգամանքների տարբերությունները որքանով են էական:

Սեյրան Այվազյանի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի 23/05/2018թ. որոշում, կետ 26



Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն:

Առաջարկված մոտեցումը լիովին համադրելի է IRAC համակարգի և ՄԻԵԴ նախադեպային իրավունքի մեթոդաբանության հետ: Զարմանալի է, որ դա լայն կիրառություն չստացավ իրավակիրառ պրակտիկայում: Մասամբ դա պայմանավորված է նրանով, որ դատարանները, որպես կանոն, ՄԻԵԴ նախադեպային իրավունքը վկայակոչելիս հազվադեպ են կատարում վկայակոչվող գործի և քննության առարկա գործի փաստերի համադրում՝ պարզելու համար, թե վկայակոչվող նախադեպը որքանով է կիրառելի տվյալ գործով: «Այվազյանի» չափորոշիչի կիրառության օրինակներ ներկայացված են ԴԱՍ-7-ում՝ կետ 6:

Կոլիզիոն հնարքները մեկնաբանության եղանակ է, որը կիրառվում է, երբ առկա է հակասություն տարբեր նորմերի միջև ու այդ դեպքում տարբեր կանոններով որոշվում է, թե որ նորմին պետք է գերապատվություն տալ: Հակասություններ կարող են լինել միջազգային և ներպետական օրենսդրական նորմերի միջև, տարբեր իրավաբանական ուժ ունեցող և միևնույն իրավաբանական ուժ ունեցող ներպետական իրավական ակտերի նորմերի միջև, ավելի վաղ ու ավելի ուշ ընդունված օրենսդրական ակտերի նորմերի միջև և այլն: Նորմատիվ իրա-

վական ակտերի մասին ՀՀ օրենքի Գլուխ 9-ը կարգավորում է բոլոր նման հակասությունները/կոլիզիաները: Իսկ միջազգային իրավունքի նորմերի և ներպետական իրավական ակտերի նորմերի միջև հակասությունները կարգավորվում է ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասով, ըստ որի՝ ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների նորմերի միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Դատարանները հաճախ են բախվում իրավիճակների հետ, երբ ներպետական օրենսդրության իրավակարգավորումը հակասել է միջազգային նորմի կարգավորմանը: Նման իրավիճակներում դատարաններն առաջնորդվում են սահմանադրության 5-րդ մասի կարգավորումով՝ միջազգային նորմը կիրառելիս: Իսկ երբ կիրառության ենթակա է ոչ թե միջազգային պայմանագրի նորմը, այլ դրա մեկնաբանությունը միջազգային դատարանի, օրինակ՝ Եվրոպական դատարանի կողմից, ապա այստեղ տեսական խնդիր կարող է առաջանալ, քանի որ Սահմանադրության և Դատական օրենսգրքի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները **մեկնաբանելիս հաշվի է առնվում** Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Այսպիսով, նորմերի կոլիզիայի դեպքում ստացվում է, որ Եվրոպական դատարանի նախադեպային դրույթները, որոնք բոլորը վերաբերում են հիմնական իրավունքներին ու ազատություններին, պարտադիր իրավաբանական ուժ չունեն:

Expressio unius կանոնը տեքստային մեկնաբանման եղանակ է, որի ժամանակ հաշվի է առնվում նորմատիվ դրույթի կամ հոդվածի ողջ համատեքստը: Ըստ այս կանոնի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման մասին (տես ԵՇԴ/0002/11/14 գործով Վճռաբեկ դա-

տարանի 27/02/2015թ. որոշումը, կետ 19): Տվյալ դեպքում խնդրո առարկա հարցն այն էր, թե արդյոք քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը ենթակա էր բողոքարկման Քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի հիմքով: Վճռաբեկ դատարանը գտավ, որ քանի դեռ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը ներառված չէր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածով նախատեսված դատական ստուգման առարկա որոշումների սպառիչ ցանկում, նշանակում է, դա պետք է մեկնաբանվի որպես նման հնարավորության բացառում:

Սա պարզ տեքստուալիզմ է, տեքստուալ մեկնաբանման հնարք, որի դեպքում արտահայտությունը մեկնաբանվում է իր սովորական իմաստի շրջանակում կամ հոդվածի ամբողջ տեքստի կամ առանձին դրույթի ամբողջ տեքստի/համատեքստի իմաստի ներքո՝ ըստ Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 41-րդ հոդվածի: Դա հաստատվեց նաև դատական ակտի հաջորդ պարբերություններում, որտեղ դատարանը բառերի ու արտահայտությունների սովորական իմաստի ներքո փաստարկում էր, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չէր կարող նույնացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման հետ, քանի որ դրանք իրենցից ներկայացնում էին տարբեր իրավական բնույթ, բովանդակություն, նպատակ և հետևանքներ ունեցող դատավարական որոշումներ:

ԵՇԴ/0002/11/14 գործով Վճռաբեկ դատարանի 27/02/2015 որոշում, կետ 19



Կիրառելով մեկնաբանման *expressio unius* հանրաճանաչ կանոնը, համաձայն որի՝ սպառիչ ցանկում որևէ տարր չներառելը պետք է մեկնաբանել դրա բացառման իմաստով՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը ներառված չէ ՀՀ քրեական դատավարության օրենս-

գրքի 185-րդ հոդվածով նախատեսված դատական ստուգման առարկայում: Միննույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը չի կարող նույնացվել քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշման հետ, քանի որ դրանք իրենցից ներկայացնում են տարբեր իրավական բնույթ, բովանդակություն, նպատակ և հետևանքներ ունեցող դատավարական որոշումներ:

Ինչպես տեսնում ենք, դատարանը երկու ընթացակարգերի բովանդակային տարբերությունը մեկնաբանել է դրանց տեքստային իմաստների պարզ համեմատությամբ՝ առանց հաշվի առնելու, օրինակ՝ օրենսդրի առաջնային նպատակն օրենքն ընդունելիս (օրենսդրի կամքի բացահայտում), հասարակական հարաբերություններում փոփոխությունները (արժեքային մեկնաբանություն), կարգավորման հետապնդվող նպատակը որպես մեկնաբանության ուղեցույց (նպատակային մեկնաբանություն), և այլ հանգամանքներ ու մեկնաբանության մեթոդներ:

Ejusdem generis կանոնը նույնպես տեքստային մեկնաբանման կանոն է՝ նորմի համատեքստում, որը սահմանում է, որ միանման առարկաների ցանկը սահմանում է առարկայի ընդհանուր հասկացությունը: Որպես օրինակ բերենք Վճռաբեկ դատարանի որոշումը Անդրիաս Ղուկասյանի վերաբերյալ թիվ ԵԱՔԴ/0533/06/16 քրեական գործից: Իրավական խնդիրը սույն գործում հետևյալն էր. եթե օրենսդիրը սահմանել է գրավի միջնորդության մերժման հիմքերի ոչ սպառիչ, բաց ցանկ, արդյոք բաց ցանկի անորոշ տարր(եր)ի բովանդակությունը կարելի է բացահայտել թվարկված տարրերի բովանդակությունից ելնելով:

**ԵԱՔԴ/0533/06/16 գործով Վճռաբեկ
դատարանի 12/04/2017 որոշում, կետ 15**



ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 143-րդ հոդվածի 2-րդ մասով՝ կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքները թվարկված են ոչ սպառիչ, և որպես այդպիսիք կարող են հաշվի առնվել նաև այլ հանգամանքներ: Այլ խոսքով՝ քննարկվող նորմով նախատեսված է կալանքից գրավով ազատելն անթույլատրելի ճանաչելու հանգամանքների բաց թվարկում, իսկ մեկնաբանման *eiusdem generis* հանրաճանաչ կանոնի համաձայն՝ բաց թվարկման չորոշակիացված տարրի բովանդակությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ելնել որոշակիացված տարրերի բովանդակությունից. անորոշ տարրը պետք է կրի այն ընդհանուր հատկանիշները, որոնք բնորոշ են որոշակիացված տարրերին:

Վճռաբեկ դատարանը գտավ, որ թեև դրույթը բառացիորեն սահմանում էր հետևյալ հիմքերը՝ *մեղադրյալի անձը հայտնի չլինելը, մշտական բնակության վայր չունենալը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձը*, օրենսդիրը դրանք թվարկել էր «մասնավորապես» բառով, հետևաբար, թվարկումը սպառիչ չէր, իսկ այլ հիմքերի բովանդակությունը պետք է բխեր թվարկված հիմքերի բովանդակությունից, թե որոնք են հանգամանքները, որոնք ընդհանրապես կարող են դրվել կալանավորման հիմքերում: Ըստ այդմ, այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք էին, օրինակ, մեղադրանքի հիմքում ընկած արարքի հանրային վտանգավորության բնույթը, մասնավորապես այն, որ մեղադրյալին մեղսագրվել էր զանգվածային անկարգություններ կազմակերպելու հանցանք, որն ուղղված էր հասարակական անվտանգության դեմ, արարքի ծանրության աստիճանը, որը դասվում էր ծանր հանցագործությունների շարքին, որի համար նախատեսված է չորսից տասը

տարի ժամկետով ազատագրվում, նույնաբովանդակ էին 143-րդ հոդվածի 2-րդ մասում շարադրված հիմքերի հետ, հետևաբար, վերաբերելի էին և կարող էին դրվել գրավի միջնորդության հիմքում:

Ահա նման մեկնաբանման հնարքի միջոցով դատարանը ցրեց օրենսդրական նորմի անորոշության վերաբերյալ կասկածները, որը հիմք հանդիսացավ և՛ տվյալ գործի լուծման, և՛ պրակտիկայում իրավական որոշակիությունն ապահովելու համար:



Գրականություն

- | | |
|------------------|---|
| 1. Սահիկ 2 | Մեկնաբանության մեթոդներ |
| 2. Վարժություն 5 | Վճռաբեկ դատարանի որոշում
ԼԴ/0082/13/09 |
| 3. Վարժություն 6 | Վճռաբեկ դատարանի որոշում
ԵԿԴ/0136/11/11 |
| 4. Վարժություն 7 | Վճռաբեկ դատարանի որոշում
ԵԱԲԴ/0533/06/16 |
-



ԴԱՍ 5 - 6

Դատական ակտերի շարահյուսություն և բառընտրություն

Դաս 5 Դատական ակտերի շարահյուսություն 2 ժամ

Դաս 6 Դատական ակտերի բառընտրություն 2 ժամ



Դասի նպատակն է դատական ակտերի շարահյուսության և բառընտրության մի շարք կանոններին ծանոթացնելը և համապատասխան հմտություններ հաղորդելը, որոնք կօգնեն հստակ ու մատչելի դատական ակտեր կազմելուն:



Ակնկալվող արդյունքները .

- ունկնդիրները կսովորեն նվազեցնել դերբայական դարձվածների անհարկի օգտագործումը դատական ակտերում,
- օգտագործել առավելապես ներգործական, քան թե կրավորական նախադասություններ,
- կազմել պարզ ու հակիրճ նախադասություններ և խուսափել երկար ու անհասկանալի պարբերություններից,
- հրաժարվել մակաբույծ բառերի, վերաբերմունք արտահայտող բառերի, նախդրավոր կառույցների օգտագործումից, որոնք անհարկի բարդացնում են դատական տեքստերը:



Դատական ակտերի տեքստերի պարզությունը և հստակությունը պահանջներ են, որոնք կապված են մի շարք հիմնարար իրավունքների իրականացման հետ, ինչպիսին են՝ պատճառաբանված դատական ակտի, անաչառ դատարանի, հրապարակային դատական քննության, արդարադատության մատչելիության իրավունքները: Ավելին, դատական ակտերի հստակությունը կապված է նաև ժողովրդավարական կառավարման կարևոր պայմաններից մեկի՝ արդարադատություն իրականացնող մարմինների նկատմամբ հանրային վերահսկողության պահանջի հետ: Դատարանները չեն կարող գործել վակուումի մեջ, ուստի, որքան կարևոր է դատական քննության և դատական ակտերի հրապարակայնությունը, այնքան էլ կարևոր է դատական ակտերի տեքստերի պարզությունն ու հստակությունը, քանի որ հակառակ դեպքում արդարադատության հրապարակայնությունը կորցնում է իր իմաստը: 2002 թվականին ընդունված «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված էր դրույթ, որը սահմանում էր, որ իրավական ակտերի լեզուն պետք է լինի ճշգրիտ, հստակ և մատչելի: 2018թ. օրենքը փոփոխվեց ու այդ դրույթը հանվեց: Անկախ այդ հանգամանքից, նշված պատճառներով պայմանավորված՝ դատական ակտերի լեզվի հստակությունը և պարզությունը մնում է որպես ակտուալ խնդիր: Ստորև ներկայացնում ենք այն հիմնական խնդիրները, որոնք առկա են դատական ակտերի տեքստերում:

Դատական ակտերի շարահյուսություն

ԴԱՍ 5

Զուգահեռ օգտագործեք

**«Դատական ակտերի շարահյուսություն
և բառընտրություն» սահիկը:**

Ներգործական և կրավորական նախադասություններ.

աշխատեք որքան հնարավոր է քիչ օգտագործել կրավորական սեռի նախադասություններ և շատ օգտագործել ներգործական սեռի նախադասություններ: Ներգործական սեռով կազմված նախադասությունը դիպուկ է, պարզ է ու համահունչ հայերենի քերականությանը և լեզվամտածողությանը: Ներգործական սեռով կազմված նախադասությունն ունի պարզ կառուցվածք. **ենթակա (սուբյեկտ) - ստորոգյալ (գործողություն) – լրացում (օբյեկտ):** Օրինակ՝ *դադարավորը մերժեց բողոքը*, այլ ոչ թե՝ *բողոքը մերժվեց դադարավորի կողմից*: Կամ, ուսումնասիրենք հետևյալ օրինակները.



Ոչ թե՛

Տուգանք նշանակելու մասին դադարանի որոշումը կարող է բողոքարկվել փուզանքի ենթարկված անձի կողմից,

այլ՝

Տուգանքի ենթարկված անձը կարող է բողոքարկել փուզանք նշանակելու մասին դադարանի որոշումը:



Ոչ թե՛

Հայցվորի կողմից Պապասխանողին է առաքվել հայցադիմումը,

այլ՝

Հայցվորն առաքել է հայցադիմումը Պապասխանողին:

Ներգործական սեռն օգտագործվում է, երբ անհրաժեշտ է ընդգծել գործողությունը կատարողին: Վերևում նշված առաջին օրինակում նախադասության մեջ ընդգծված է դատարանը՝ որպես գործողություն կատարող, երկրորդ օրինակում՝ հայցվորը: Կրավորական սեռ կարելի է օգտագործել այն ժամանակ, երբ պարզ չէ, թե ով է գործողություն կատարողը կամ արտահայտությունը հնչեցնողը նպատակ չունի ընդգծել գործողությունը կատարողին, այլ նպատակ ունի ընդգծել գործողության կատարված լինելու փաստը, որի դեպքում արդեն էական չէ, թե ով է գործողություն կատարողը: Օրինակ.



Հայցադիմումը վերադարձնելու մասին Դատարանի որոշումը կարող է **բողոքարկվել** ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան:

Վերը նշված օրինակում նախադասության նպատակն է ընդգծելը հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման բողոքարկման հնարավորությունը, այլ ոչ թե գործողությունը կատարողին (ենթակային): Այդ պատճառով նախադասությունը զերծ է ավելորդությունից:

Ընդհանրապես լեզվաբանները գտնում են, որ հայերենին առավել բնորոշ է ներգործական սեռի լեզվամտածողությունը, իսկ կրավորական սեռը հայերեն լեզվական առանձնահատկություններին դժվար է համակերպվում: Այդ իմաստով դատական ակտերում հաճախ է օգտագործվում «կողմից» բառը կրավորական սեռի պարագան շեշտելու համար, որ ոչ միայն լեզվին հաղորդում է անբնական երանգներ, այլ նաև քերականորեն սխալ է ու ավելորդ բարդացնում է նախադասության կառուցվածքը ու դրա ընկալումը: Ավելին, կրավորական սեռը, ի տարբերություն ներգործականի, ունի նաև հոգեբանական ներգործություն՝ թուլացնում է իմաստային շեշտադրումը, չեզոքացնում է նախադասությամբ հաղորդվող մտքի դիպուկությունը: Ձեր ուշադրությունն ենք հրավիրում ստորև նշված ցանկի օրինակների վրա.



×	✓
Դատարանի կողմից որոշվեց	Դատարանը որոշեց
Գործատուի կողմից լուծվեց պայմանագիրը	Գործատուն լուծեց պայմանագիրը
Օրենքի կողմից նախատեսվող	Օրենքով նախատեսվող
Սակայն իր կողմից վերադարձվել են	Սակայն նա վերադարձրել է
Ամբաստանյալի կողմից կատարված	Ամբաստանյալի կատարած
Ամբաստանյալի կողմից կազմվել ու վավերացվել է	Ամբաստանյալը կազմել ու վավերացրել է
Հայցվորի կողմից ներկայացված	Հայցվորի ներկայացրած
Մինչև դատարանի կողմից որոշում կայացվելը	Մինչև դատարանի որոշումը կայացնելը

ԿԱՐԵՎՈՐ Է

Կրավորական նախադասություններ կիրառեք միայն այն դեպքում, երբ կարևոր է ընդգծել գործողությունը: Եթե կարևոր է ընդգծել գործողությունը կատարողին, կիրառեք ներգործական սեռի նախադասություններ:

Դերբայական դարձվածներ. աշխատեք տեքստը չճանրաբեռնել դերբայական դարձվածներով: Դրանց շարունակական օգտագործումը մեկ նախադասության կամ պարբերության մեջ ծանրաբեռնում է տեքստը, ընթերցողին շեղում հիմնական

ասելիքից և հաճախ պարբերության վերջում, որում կարող են ներառված լինել հինգ և ավելի դերբայական դարձվածներ, ընթերցողը դժվար է կողմնորոշվում, թե որն էր պարբերության հիմնական ասելիքը կամ կենտրոնական միտքը: Կարելի է դիմել մի քանի հնարքների, որպեսզի դերբայական դարձվածների շարունակական կիրառումը չծանրաբեռնի տեքստը: Առաջին, առաջարկվում է դերբայական դարձվածների մի մասը փոխարինել երկրորդական նախադասություններով: Դիտարկենք հետևյալ օրինակը՝

Մեջբերում դպրական ակտից.



... մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա... ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրության համար վրանգավոր արարք կատարելու համար դատապարտված **լինելով** մեկ տարի վեց ամիս ժամկետով ազատազրկման և զրկված **լինելով** երեք տարի ժամկետով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, այլոհուլ **օգտագործած** վիճակում 2019 թվականի մարտի 13-ին ժամը 22:30-ի սահմաններում... բեռնատար ավտոմեքենան **վարելով** գնացել է «Աշտարակ Բժշկական Կենտրոն» ՓԲ-ի ընդունարանի բակ, ապա **մղնելով** ընդունարան, խեղաթյուրված ձևով **դրսևորելով** իր ինքնահաստատման պահանջը, **արհամարհելով** հասարակության կողմից ճանաչում ստացած վարքագծի համընդհանուր կանոնները, բարոյական և իրավական նորմերը, իր և հասարակության անդամների համար ակնհայտորեն դիտավորությամբ կոպիտ **խախտելով** հասարակական կարգը և **արտահայտելով** բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ, շուրջ 10-15 րոպե տևողությամբ սեռական բնույթի խուլիգանական հայիոյանքներ է հնչեցրել հիվանդանոցի աշխատակիցների հասցեին, տևական ժամանակ **խաթարվել** է «Աշտարակ ԲԿ» ՓԲԸ-ի հիվանդանոցի բնականոն աշխատանքը:

Նշված պարբերության մեջ դատարանը շարադրել է մեղադրյալի գործողությունները մոտ ինը դերբայական դարձվածներով, որով տեքստը դարձրել է միապաղաղ ու զերծ դինամիզմից: Վերջում գործողությունների նկարագրությունը եզրափակել է կրավորական սեռի նախադասությամբ, որով էլ ավելի է թուլացրել տեքստի ուժգնությունը: Մինչդեռ տեքստի հեղինակը կարող էր գործողությունները թվել ստորոգումով, իսկ վերջում իր ասելիքը եզրափակել ներգործական սեռի նախադասությամբ: Այդ դեպքում տեքստը կունենա հետևյալ տեսքը.

Մեջբերում դատական ակտից.



.... մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա... ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանրության համար վրանգավոր արարք կատարելու համար դատապարտված **լինելով** մեկ փարի վեց ամիս ժամկետով ազատազրկման և զրկված **լինելով** երեք փարի ժամկետով տրանսպորտային միջոց վարելու իրավունքից, ալկոհոլ **օգտագործած** վիճակում 2019 թվականի մարտի 13-ին ժամը 22:30-ի սահմաններում... բեռնատար ավտոմեքենան **վարելով գնացել է** «Աշտարակ Բժշկական Կենտրոն» ՓԲ-ի ընդունարանի բակ, **մտել է** ընդունարան, խեղաթյուրված ձևով **դրսևորել է** իր ինքնահաստատման պահանջը, **արհամարհել է** հասարակության կողմից ճանաչում ստացած վարքագծի համընդհանուր կանոնները, բարոյական և իրավական նորմերը, իր և հասարակության անդամների համար ակնհայտորեն դիտավորությամբ կոպիտ կերպով **խախտել է** հասարակական կարգը, **արտահայտել է** բացահայտ անհարգալից վերաբերմունք հասարակության նկատմամբ, շուրջ 10-15 րոպե տևողությամբ սեռական բնույթի խուլիգանական հայիոյանքներ **է հնչեցրել** հիվանդանոցի աշխատակիցների հասցեին, տևական ժամանակ **խաթարել է** «Աշտարակ ԲԿ» ՓԲԸ-ի հիվանդանոցի բնականոն աշխատանքը:

Երբ ներգործական սեռի նախադասությունները ստորոգվում են, տեքստը դառնում է կոնկրետ, ու վերանում է դերբայական դարձվածի իմաստային չեզոքությունը: Իսկ երբ դերբայական դարձվածները արագորեն ու առանց շաղկապների միմյանց հաջորդում են, տեքստը ձեռք է բերում միօրինակություն, միապաղաղություն, կարդացվում է արագ, որի ընթացքում ընթերցողը դարձվածներն ընկալում է որպես չեզոք մտքեր, որոնք պետք է կրկնել շուտասելուկի պես, ու արդյունքում ուշադրությունից վրիպում են կարևոր դրվագներ ու տպավորություններ:

Պարզ և բարդ նախադասություններ. Դատական ակտերը հիմնականում բաղկացած են բարդ ստորադասական նախադասություններից, որոնք միմյանցից տարանջատվում են շաղկապներով (եթե..., ապա; քանի որ..., ուստի; ոչ միայն..., այլև; ոչ թե..., այլ; այն..., որ; այնպես..., ինչպես և այլն): Բազմաթիվ են օրինակները, երբ դատական տեքստում մեկ նախադասությունը կազմում է մոտ կես էջ, որում նախադասություններն իրարից բաժանված են ստորակետներով: Սակայն խնդիրը ստորակետների քանակի մեջ չէ, այլ նրանում, թե քանի միտք է արտահայտված մեկ նախադասության մեջ և թե արդյոք դրանք համասեռ մտքեր են: Հաճախ նման երկար նախադասություններով պարփակված մեկ պարբերության մեջ զետեղված են գործողության հիմունքի, ձևի, ժամանակի, տեղի, նպատակի պարագաները: Դա առաջացնում է խառնաշփոթ ու, արդյունքում, տեքստը կորցնում է հետաքրքրությունը ընթերցանության համար: Ահա մի քանի խորհուրդներ, որոնք կօգնեն նույնիսկ բարդ նախադասություններով կազմված տեքստերը դարձնել ընկալելի և հեշտ ընթերցանելի.

- ▶ աշխատեք, որ պարբերությունները ունենան 5-8 տող: Պարբերության առաջին նախադասությունը պետք է արտահայտի պարբերության ամբողջ ասելիքը, այսինքն, կարևոր միտքը պետք է թողնել ոչ թե վերջում,

այլ նշել սկզբում՝ պարբերության առաջին նախադասությամբ: Մնացած նախադասությունները պետք է ծառայեն առաջին նախադասության իմաստի բացահայտմանը: Պարբերության վերջին նախադասությամբ պետք է ամփոփվի պարբերության ողջ ասելիքը: Միևնույն ժամանակ, վերջին նախադասությունը պետք է հիմք հանդիսանա հաջորդ պարբերության առաջին նախադասության համար, և այդպես շարունակ:

- ▶ Նախադասությունը սկսեք կարճ ու կոնկրետ գոյականով (ենթակայով): Այլ կերպ ասած, նախադասության սուբյեկտի (անձը կամ առարկան, որի մասին նախադասության մեջ շարադրվում է) նկարագրությունը պետք է արվի հակիրճ: Սուբյեկտի նկարագրությունը, որը բաղկացած է մի քանի բառից ավելի բառակապակցությամբ, ձանձրացնում է ու շեղում ուշադրությունը՝ տեքստը դարձնելով դժվար ընկալելի:
- ▶ Ենթական ստորոգյալից մի անջատեք միջանկյալ նախադասություններով կամ արտահայտություններով՝ հատկապես, եթե կազմել եք երկար նախադասություն: Ընթերցողը նախադասության մեջ առաջին հերթին կողմնորոշվում է ենթակայի և ստորոգյալի տեղադրմամբ: Եթե նրանց միջև էական շեղում կա, դա կարող է խառնաշփոթ առաջացնել:

ԿԱՐԵՎՈՐ Է

Պարբերության մեջ երկար նախադասությունները բաժանեք մի քանի կարճ նախադասությունների: Նախադասությունները շաղկապով կամ ստորակետով իրար միացնելու փոխարեն դրանք տարանջատեք վերջակետով: Ցանկացած ընթերցող նման տեքստերն ընթերցելիս ավելի ուշ է հոգնում ու ավելի շատ մտապահում: Ավելին, նման տեքստերն ավելի մեծ տպավորություն են թողնում ընթերցողի վրա:

Ձուգահեռ օգտագործեք

**«Դատական ակտերի շարահյուսություն
և բառընտրություն» սահիկը:**

Դատական ակտերում հաճախ օգտագործվում են բառեր ու արտահայտություններ, որոնք տեքստի բովանդակությանը էական իմաստ չեն հաղորդում, անտեղի ծանրացնում են տեքստը, գրկում հստակությունից, պարզությունից, տեքստը դարձնում են դժվար ընկալվող: Հաճախ նման բառերն ու արտահայտությունները օգտագործվում են պրակտիկայի ուժով. տարիներ շարունակ դրանք շարունակաբար օգտագործվել են ու դարձել կաղապարված արտահայտություններ, որոնց սովորաբար որևէ կարևորություն չի տրվում դատավարության մասնակիցների կողմից: Դատական ճանաչողության, ապացույցների գնահատման, գործի լուծման համար նման արտահայտությունները որևէ նշանակություն չունեն: Ընդհակառակը, դրանք որոշ առումով նվազեցնում են խոսքի արժանահավատությունը, փաստարկների լրջությունը, քանի որ ավելորդ չափազանցության տպավորություն են հաղորդում տեքստին: Օրինակ, մի բան է ասել, որ փաստարկներն անհիմն են, մեկ այլ բան՝ փաստարկներն ակնհայտորեն անհիմն են: «Ակնհայտորեն» բառը մեծամասամբ օգտագործվում է խոսքին որոշակի երանգ տալու համար, քանի որ հազվադեպ է պատահում, երբ դատավարության կողմը ներկայացնում է ակնհայտորեն անհիմն փաստարկ: Հիմնականում փաստարկները լինում են թույլ հիմնավորված կամ վիճելի, քան թե ակնհայտորեն անհիմն: Իսկ երբեմն էլ բառերն օգտագործվում են մեխանիկորեն, առանց նույնիսկ դրանց իմաստն ընկալելու և նույնիսկ նկատելու դրանց գոյությունը: Այդպիսի բառերն օգտագործվում են սովորության համաձայն, շուտասելուկի պես, ու կոչվում են մակաբույծ (պարագիտ) բառեր:

Վերը նշված օրինակներն ավելորդաբանություններ են, որոնցից պետք է խուսափել պարզ, հստակ ու գրագետ իրավական տեքստ ունենալու համար: Ուսումնասիրենք դրանցից առավել տարածվածները:

Վերաբերմունք արտահայտող բառեր. Դատական ակտը պետք է արտահայտի չեզոք վերաբերմունք: Օբյեկտիվ դիտորդի մոտ չպետք է ձևավորվի տպավորություն, որ դատարանն ունեցել է կանխակալ բացասական կարծիք դատավարության որևէ մասնակից անձի, նրա ներկայացրած դիրքորոշումների վերաբերյալ: Հակառակ դեպքում հարց կբարձրանա դատարանի անկախության կամ դատավորի անաչառության բացակայության մասին: Օրինակ, գնահատենք հետևյալ պարբերությունը.



Դատարանը գտնում է, որ նախաքննությունը և դրանից հետո հնարավոր դատաքննությունը ողջամտորեն կարող է տևական ժամանակ շարունակվել, իսկ թե դրանից հետո քրեական գործի ելքն ինչ լուծում կարող է ստանալ, պարզ չէ, քանի որ չի բացառվում, որ քրեական գործի վարույթը կարճվի կամ կայացվի արդարացման դատավճիռ: Իսկ նման պայմաններում զուտ նախաքննության փուլում քրեական գործի գտնվելն *արդարացիորեն* չի կարող հանգեցնել սույն գործով Համաներման օրենքի կիրառման արգելքին:

Եթե այս պարբերությունից հեռացնենք «արդարացիորեն» բառը, ապա բովանդակությունը չի փոփոխվի, մինչդեռ այդ բառի օգտագործումը արտահայտում է որոշակի կանխակալ վերաբերմունք խնդրո առարկա հարցին գնահատական տալիս: Քննարկենք մեկ այլ օրինակ.



Դատարանը նաև արձանագրել է, որ դեռևս բուն դատաքննությունը չի մեկնարկել՝ տուժողները և վկաները չեն հարցաքննվել, սակայն կրկին նույն գործելատճով նշել է նաև, մեղադրյալի կողմից դատավարությանը մասնակցող անձանց վրա ապօրինի ազդեցություն գործադրելու մասին դատողություն կատարելու հիմքեր չկան, մինչդեռ տվյալ հիմքերի մասին *ակնհայտորեն* վկայող փաստարկները ներկայացվել են:

Սա մեջբերում է Վերաքննիչ դատարանի որոշումից, որով վերջինս դատական ստուգման է ենթարկել խափանման միջոց կալանավորման մասին առաջին ատյանի դատարանի որոշումը: Վերջին նախադասության մեջ «ակնհայտորեն» բառը Վերաքննիչ դատարանի՝ առաջին ատյանի դատարանի որոշմանը տված գնահատականին տալիս է ավելորդ զգացմունքայնություն, քննադատական երանգ, որն ավելորդ է, ավելին, կարող է երրորդ կողմից մոտ տպավորություն ստեղծել, որ դատարանը նախատրամադրվածություն ունի առաջին ատյանի դատարանի հանդեպ:
Եվս մեկ օրինակ՝



Թեև ամբաստանյալը և գումարտակի հրամանատարը նախաքննության ընթացքում հարցաքննվել են, սակայն ստուգման ենթակա վերը նշված հանգամանքն ըստ էության չի արժևորվել, դրա շուրջ հարցաքննությունները կրել են *խիստ* մակերեսային բնույթ:

Այս պարբերության մեջ կարիք չկար քննության մակերեսային լինելը գնահատել «խիստ» ածականով, եթե դա դատական ակտի առարկա չի հանդիսանում, որը երևում է հետագա ողջ տեքստից: Հետևաբար, հնչեցված գնահատականը ավել-

լորդ ձևականություն էր, որն արտահայտում է որոշում կայացնողի սուբյեկտիվ վերաբերմունքը:

Մակարոյծ (պարագիտ) բառեր. դրանք բառեր են, որոնք որևէ կերպ չեն ազդում բովանդակության վրա, ավելորդ են ու անհարկի ծանրացնում են տեքստը: Հաճախ նման բառերն օգտագործվում են սովորության կամ ձևավորված պրակտիկայի համաձայն, և եթե այդ բառերը տեքստից դուրս բերվեն, բովանդակությունը որևէ կերպ չի տուժի: Երբեմն նման բառերը լեզվաբանորեն և նույնիսկ իրավաբանորեն անիմաստ են, իսկ երբեմն էլ դրանք այլ լեզվից, օրինակ, ռուսերենից ներմուծված արտահայտություններ են, որոնք խորթ են հայերենի լեզվամտածողությանը: Ահա դրանց օրինակները.



Ռուսերենից ներմուծված արտահայտություններից շատ է օգտագործվում «հանդիսանում է» բառը, որը ռուսերեն являється բառի թարգմանությունն է, և եթե ռուսերենում ասվում է он является судьей первой инстанции, չի նշանակում, որ հայերենում ճիշտ է օգտագործել «նա հանդիսանում է առաջին ատյանի դատավոր», որտեղ ավելորդ է «հանդիսանում է» բառը: Նման օրինակ է նաև состоит բառի ազդեցությունը հայերեն տեքստերում: Եթե ռուսերենում ասվում է вопрос состоит в том..., չի նշանակում, որ հայերենում պետք է ասվի «հարցը կայանում է նրանում», այլ դրա փոխարեն ճիշտ է ասելը «հարցը նրանում է»: Ահա մի քանի օրինակներ.



✗	✓
Խնդիրը կայանում է նրանում...	Խնդիրը նրանում է...
Նա հանդիսանում է առաջին ատյանի դատարանի դատավոր:	Նա առաջին ատյանի դատարանի դատավոր է:
Աշխատավարձի չափը կազմում է 200,000 դրամ:	Աշխատավարձի չափը 200,000 դրամ է:
Սահմանադրությունը դա պետության հիմնական օրենքն է:	Սահմանադրությունը պետության հիմնական օրենքն է:
Փաստաթուղթն իր մեջ ներառում է...	Փաստաթուղթը ներառում է...
Որոշումն իրենից ներկայացնում է...	Որոշումը ներկայացնում է...
Դատարանը գտնում է:	Դատարանը կարծում է:

Մի առանձին խոսակցության առարկա է «դա» դերանվան սխալ օգտագործումը: Լեզվի կոմիտեն դրա հետ

Լեզվի կոմիտե / Language Committee
August 22, 2019

ԴՆ դերանվան սխալ գործածության մասին

«Ընկերությունը առաջին հերթին ԴՆ հավատարմություն է»:
«Սերը ԴՆ այն զգացմունքն է, որ կապում է երկու սրտեր»:
«Համացանցը ԴՆ այն կայան է, որ ապահովում է մարդկանց արագ հաղորդակցությունը»:
Կարելի է բերել ԴՆ ցուցական դերակվան «մասնակցությամբ» սխալների այսպիսի բազում օրինակներ: Միայն պատճառը ռուսերենից բառացի թարգմանությունն է (тобой это... интернет это... и այլն), հայերենում միշտ չէ գործածել ենթակային կրկնող դերանուն: Եվ՞չ խուսափե՞ց այս մակարդակի ԴՆ-ից և խոսե՞ց միշտ:

«Ընկերությունը առաջին հերթին հավատարմություն է»:
«Սերն այն զգացմունքն է, որ կապում է երկու սրտեր» կամ «Սերը երկու սրտեր կապող զգացմունք է»:
«Համացանցը այն կայան է, որ ապահովում է մարդկանց արագ հաղորդակցությունը» կամ «Համացանցը մարդկանց արագ հաղորդակցությունն ապահովող կայան է»:

կապված նույնիսկ **հայտարարություն է** արել: Սխալ է ենթակայից անմիջապես հետո նույն սուբյեկտի վերաբերյալ դնել դերանուն: Վերևում բերված է մեկ օրինակ՝ «Սահմանադրությունը դա պետության մայր օրենք է» նախադա-

սուբյեկտ: Եթե նշվում է ենթական որպես նախադասության սուբյեկտ, ապա սխալ է կրկին շեշտել սուբյեկտը դերանվան նշումով: Այդ սխալը շատ տարածված է: Դա բխում է ռուսերեն **Конституция – это основной закон...** արտահայտության ու նմանատիպ արտահայտությունների բառացի թարգմանությունից, որում ենթակայից հետո դրվում է **это** դերանունը:


- ▶ Տարածված սխալ է, երբ **նման, բնույթի, կարգով, ձևով, կերպով** բառերը գործածվում են առարկայի կամ գործողության հատկանիշ ցույց տվող ածականի կամ մակբայի հետ միասին: Այդ դեպքում ստացվում է առարկայի կամ գործողության հատկանիշի կրկնակի շեշտադրություն: Ահա մի քանի օրինակներ.



×	✓
Պատշաճ կարգով ծանուցվել է:	Պատշաճ ծանուցվել է:
Գրավոր կերպով տեղեկացվել է:	Գրավոր տեղեկացվել է:
Խստիվ կերպով արգելվում է:	Խստիվ արգելվում է:
Արագ կերպով քննել գործը:	Արագորեն քննել գործը:
Բժշկական բնույթի միջամտություն:	Բժշկական միջամտություն:
Մեղադրական բնույթի դատական ակտ:	Մեղադրական դատական ակտ:

Հաճախ բառը կիրառվում է սխալ իմաստով, սակայն շարունակվում է այդպես կիրառվել, քանի որ տարիների ընթացքում դա դարձել է կարծրատիպ, լայնորեն կիրառվող արտահայտություն՝ առանց խորամուղ լինելու իմաստի և կիրառության հակասականության մեջ: Ստորև աղյուսակում ներկայացված են մի քանի օրինակներ: Գրեթե առանց բացառության կիրառվում է «օրինական ուժի մեջ մտած» արտահայտությունը, մինչդեռ եթե դատական ակտն ուժի մեջ է մտել, ապա պարզ է, որ դա տեղի է ունեցել օրինական կարգով: Թեև օրենքով սահմանված եզրույթ է, սակայն անիմաստ միտք է արտահայտում:

Դիտենք տեսաֆիլմը



«Հայրը հետ վերադարձնել» արտահայտության մեջ երկու իրար հաջորդող բառեր արտահայտում են միևնույն իմաստը, հետևաբար, պետք է ուղղակի ասել «հայրը վերադարձնել»: Իսկ մյուս օրինակում «անհարկի» բառն օգտագործվում է անհիմն բառի իմաստով, թեև դրանք

տարբեր իմաստներ ունեն: «Վերաբերվում» բառը լայնորեն օգտագործվում է «վերաբերում» բառի փոխարեն: Եթե «որ» շաղկապն արտահայտում է նպատակի, պայմանի, պատճառի, ժամանակի և այլ իմաստներ, «որպեսզի» շաղկապն ունի միայն նպատակի իմաստը: Այսինքն, երկրորդական նախադասությունը կարող է սկսվել «որպեսզի» շաղկապով միայն այն դեպքում, երբ երկրորդական **նախադասությունն արտահայտում է նպատակի իմաստ:** «Արդյունքում» և «հետևանքով» բառերը նույնպես օգտագործվում են սխալ իմաստով:

Որևէ խախտում կամ բացասական երևույթ ունի պատճառ, իսկ արդյունքը որևէ գործընթացի ավարտն է: Ճիշտ է ասել, որ օրենքի խախտման պատճառով անձը զրկվեց իր իրավունքից, իսկ որոշումը կայացվեց քննության արդյունքում, այլ ոչ թե քննության պատճառով:



×	✓
Օրինական ուժի մեջ մտած:	Ուժի մեջ մտած:
Հայցը հետ է վերադարձվել:	Հայցը վերադարձվել է:
Հայցվորն անհարկի մեղադրում է:	Հայցվորն անհիմն մեղադրում է:
Դատարանի գործունեության անհարկի միջամտություն:	Դատարանի գործունեության անօրինական միջամտություն;
Ինչ վերաբերվում է դիմումին...	Ինչ վերաբերում է դիմումին...
Նա ինձ վատ է վերաբերում :	Նա ինձ վատ է վերաբերվում:
Անհրաժեշտ է, որպեսզի հայցվորի կողմից ներկայացված...	Անհրաժեշտ է, որ հայցվորի կողմից ներկայացված...
Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումին պետք է կցվեն Դիմողի ընտանիքի անդամ հանդիսանալը հաստատող ապացույցներ, որպեսզի Դատարանը հնարավորություն ունենա պարզելու...	Քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումին պետք է կցվեն Դիմողի ընտանիքի անդամ հանդիսանալը հաստատող ապացույցներ, որ Դատարանը հնարավորություն ունենա պարզելու...
Օրենքի խախտման արդյունքում...	Օրենքի խախտման պատճառով...

Ամփոփում. Դատական ակտերում անհրաժեշտ է առավելապես օգտագործել ներգործական սեռի նախադասություններ: Կրավորական սեռի օգտագործումը խոսքին հաղորդում է չեզոք իմաստ: Ներգործական սեռ օգտագործեք, եթե ցանկանում եք շեշտադրել գործողություն կատարողին, ենթակային, իսկ եթե ցանկանում եք շեշտադրել գործողությունը, օգտագործեք կրավորական սեռ:

Լուծե՛ք

Գրականության ցանկում ներառված վարժությունները:

Նվազեցրեք նաև դերբայական դարձվածները: Եթե թվարկում եք դերբայական դարձվածներով նախադասություններ, դրանց մի մասը փոխարինեք ներգործական սեռի երկրորդական նախադասություններով: Օգտագործեք առավելապես պարզ նախադասություններ: Խուսափե՛ք մակաբույժ բառերից ու արտահայտություններից, որոնք ներկայումս իրավական տեքստերում շատ են:



Գրականություն

- | | |
|---|--|
| <ol style="list-style-type: none"> 1. Սահիկ 2.. Ազդարար 3. Վարժություն 4. Վարժություն 5. Լրացուց.ընթերց. 6. Լրացուց.ընթերց. 7. Լրացուց.ընթերց. | <p>3 Դատական շարահյուսություն և բառընտրություն</p> <p>Դատական ակտերի շարահյուսություն</p> <p>Դերբայական դարձվածներ</p> <p>Կրավորական արտահայտություններ</p> <p>Իրավական փաստաթղթերի շարահյուսություն</p> <p>Իրավական փաստաթղթերի բառընտրություն</p> <p>Իրավաբանական գիր և գրություն</p> |
|---|--|



ԴԱՍ 7

Դատական ակտերի վկայակոչում նախադեպային իրավունքում

Դաս 7 Մարդու իրավունքների եվրոպական
դատարանի որոշումների
վկայակոչումը
դատական ակտերում:

2 ժամ



Դասի նպատակն է ՄԻԵԴ նախադեպային իրավունքի կիրառության հիմունքներին ծանոթացնելը և գործնական գիտելիքներ ու հմտություններ հաղորդելը:



Ակնկալվող արդյունքները.

- տարբերակել նախադեպային նշանակություն ունեցող դատական ակտերը և դրանցում նախադեպային նշանակություն ունեցող դրույթները,
- տարբերակել նախադեպային դրույթը (*ratio decidendi*) նախադեպային նշանակություն չունեցող (*dictum*) դրույթից,
- սովորել ՄԻԵԴ վճիռները և որոշումները վկայակոչելու ձևաչափերը,
- կարողանալ պատշաճ կերպով դատական ակտերից մեջբերումներ կատարել:

Դատական նախադեպը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում

Ձուգահեռ օգտագործեք

«Հղումներ և վկայակոչումներ դատական ակտերում» սահիկը:



Առնվազն 2002 թվականի ապրիլից, երբ Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան և դրանով հանդերձ ճանաչեց ՄԻԵԴ պարտադիր իրավագործությունը, ՀՀ դատական ակտերում վկայակոչվում են այս դատարանի վճիռները և որոշումները: Իսկ եթե ավելի ստույգ լինենք, ապա հայտնի են դեպքեր, երբ դատարանի որոշումները վկայակոչվել են նաև 1999 թվականին Արդարադատության խորհրդի կարգապահական վարույթում մի գործի կապակցությամբ: Այսօր արդեն դժվար է պատկերացնել ՀՀ-ում դատարանաստեղծ գործունեություն առանց Եվրոպական դատարանի որոշումների: Իրավունքի մի շարք ճյուղեր զարգացել են այս դատարանի որոշումների ազդեցության ներքո: Ավելին, որոշ ոլորտներում կան իրավահարաբերություններ, որոնք ավելի շատ կարգավորվում են Եվրոպական դատարանի ու Վճռաբեկ դատարանի նախադեպային, քան օրենսդրական դրույթներով: Մայրցամաքային իրավական համակարգի համար, ինչպիսին ՀՀ իրավական համակարգն է, դա առաջին հայացքից անսովոր է ու տարօրինակ է թվում: Այդուհանդերձ, դրա հիմնական պատճառը Եվրոպական դատարանի կողմից նախադեպային իրավունքը ճկուն օգտագործելու եղանակն է, առանց մեծ նշանակություն տալու նախադեպային իրավունք ավանդական բոլոր հատկանիշներին:

Ընդհանուր առմամբ, իրավաբանության մեջ հայտնի են նախադեպային իրավունքի հետևյալ տեսակները՝ պարտադիր նախադեպ, ազդող նախադեպ, կայուն [դատական] պրակտի-

կա (jurisprudence constante), համակարգային հարգանք դատական ակտերի շարունակականության նկատմամբ և ոչ-պարտադիր նախադեպ: Սկզբունքորեն, Եվրոպական դատարանը չի կիրառում պարտադիր նախադեպային իրավունք իր դասական իմաստով: Կանոնների կուռ համակարգը, որ գործում է Ընդհանուր իրավունքի (անգլո-սաքսոնական) երկրներում նախադեպային որոշումներ ու դրույթներ վկայակոչելիս չեն կիրառվում Եվրոպական դատարանի կողմից: Հակառակ դեպքում Եվրոպական դատարանի համար հնարավոր չէր լինի իր նախադեպային որոշումները տարածել Եվրոպայի խորհրդի երկրներում, որոնց մեծ մասի համար նախադեպային իրավունքը պատմականորեն անծանոթ իրավական կատեգորիա է եղել: Օրինակ, դասական նախադեպային իրավունքում գործում են *stare decisis* և *dictum* կանոնները: Երկուսն էլ եզրույթներ են, որոնցից առաջինը նշանակում է նախադեպային նշանակություն ունեցող նորմատիվ բնույթի դրույթ դատական ակտում (թարգմանաբար՝ նման գործը որոշվում է նման կերպ), իսկ երկրորդը՝ նախադեպային նշանակություն չունեցող և նորմատիվ բնույթ չունեցող դրույթ դատական ակտում (թարգմանաբար՝ ընդհանուր ճշմարտություն): Այսինքն, նախադեպում դատավորը կայացնում է մի շարք եզրահանգումներ, որոնցից ոչ բոլորն ունեն նորմատիվ բնույթ և որպես այդպիսին ձեռք բերում նախադեպային արժեք ու ստանում պարտադիր իրավաբանական ուժ: Երբ իրավաբանը դատարանում կամ իր փաստարկներում վկայակոչում է որևէ դրույթ դատական նախադեպից, պարտավոր է ցույց տալ, որ այդ դրույթը նորմատիվ բնույթ ունի, ստացել է նախադեպային ուժ, իսկ նրա դատավարական հակառակորդը կարող է պնդել, որ վկայակոչված դրույթը *dictum*-է, այսինքն մի բան, որը դատավորը նշել է «հենց այնպես»՝ որպես ընդհանուր ճշմարտություն, որը, սակայն, դեր չի խաղացել դատավորի համար տվյալ որոշումը կայացնելիս:

Վերը նշված նախադեպային կանոնները խորությամբ չեն կիրառվում Եվրոպական դատարանի կողմից ու դատարանի

վարույթում երբեք չեն ծավալվում քննարկումներ այն մասին, թե արդյոք տվյալ դրույթը նախադեպային ուժ ունի, թե ոչ: Այսպիսով, Եվրոպական դատարանը չի կիրառում պարտադիր նախադեպային իրավունք: Դրա փոխարեն կիրառում է ոչպարտադիր նախադեպային իրավունք՝ ըստ վերը նշված ցանկի: Դատարանը չի ցանկանում իրեն կաղապարել պարտադիր նախադեպային իրավունքի կանոններով, որպեսզի ունենա որոշակի ազատություն իր դիրքորոշումներում, հնարավորություն ունենա հեռանալ նախադեպից և Կոնվենցիան մեկնաբանի տվյալ օրվա հասարակական հարաբերությունների լույսի ներքո՝ ապահովելով «Կոնվենցիան կենդանի իրավական փաստաթուղթ է» սկզբունքի կիրառումը, որ Կոնվենցիան շարունակի մնալ ժամանակակից իրավական փաստաթուղթ ու ապահովի իրական ու գործնական, այլ ոչ թե ձևական ու պատրանքային իրավունքներ: Օրինակ, երբ Եվրոպայի խորհրդի տարածքում ձևավորվում է կոնսենսուս որևէ իրավունքի վերաբերյալ, որը Կոնվենցիայով սահմանված չէ, և որի վերաբերյալ գանգատները Եվրոպական դատարանը շարունակ մերժել է նյութաիրավական *ratione materie* հիմքի բացակայության հիմքով, Եվրոպական դատարանը կարող է որոշել փոխել իր նախադեպային իրավունքը, ամրագրել նոր իրավունքի գոյությունը և գանգատը ընդունել վարույթ՝ այդպիսով Կոնվենցիայի շրջանակում ստեղծելով նոր իրավունք: Ներկայացնենք հետևյալ օրինակը Բայաթյանն ընդդեմ Հայաստանի գործով վճռից.



Հաշվի առնելով վերոգրյալը և «կենդանի փաստաթուղթ» մոտեցմանը համապատասխան՝ Դատարանը, հետևաբար, այն կարծիքին է, որ հնարավոր չէ հաստատել Հանձնաժողովի կողմից սահմանված նախադեպային իրավունքը, և 9-րդ հոդվածն այսուհետ չպետք է մեկնաբանվի 4-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի հետ համակցությամբ: Հետևաբար, դիմումատուի բողոքը պետք է քննարկել բացառապես 9-րդ հոդվածի ներքո:

Մյուս պատճառը նրանում է, որ Դատարանը կիրառում է իրավագործություն 47 պետությունների իրավական համակարգերի նկատմամբ և որպեսզի կարողանա համագործակցել պատմականորեն զարգացման տարբեր ուղիներ անցած իրավական համակարգերի նման բազմազանության հետ, դատարանին անհրաժեշտ է ցուցաբերել ճկունություն Կոնվենցիան կիրառելիս: Սուբսիդիարության սկզբունքը, որի ներքո ՄԻԵԴ-ը Կոնվենցիան կիրառելիս պատասխանող պետությանն օժտում է հայեցողության նկատելի ոլորտով, կոչված է նաև ծառայելու այդ նպատակին:

Թեև դատարանը կիրառում է ոչ պարտադիր նախադեպային իրավունք և անհրաժեշտության դեպքում կարող է հեռանալ իր նախկին նախադեպից, պրակտիկայում դա պատահում է շատ քիչ, փոխարենը, մեծամասամբ հետևում է իր նախկին վճիռներում արտահայտած իրավական դիրքորոշումներին և դրանցում ձևավորված սկզբունքներին, նախկին վճիռը իր համար հանդիսանում է նմանատիպ գործի լուծման եթե ոչ պարտադիր նախադեպային իրավունքի աղբյուր, այլ առնվազն որպես **տիպային օրինակ**, որը ապահովում է նախադեպային նորմատիվ սկզբունքների կիրառության կանխատեսելիություն և շարունակականություն: Դա է պատճառը, որ պրակտիկայում Դուք ավելի շատ կբախվեք նախկին որոշումները՝ որպես տիպային օրինակներ հետևողականորեն ընդօրինակելու, քան թե նախկին որոշումներից հեռանալու դատական պրակտիկային: Ըստ այդմ, անհրաժեշտ է ուսումնասիրել մի շարք սկզբունքներ ու օրինաչափություններ, որոնց շրջանակներում Եվրոպական դատարանը հետևողականորեն հետևում է իր նախկին որոշումներին որպես տիպային օրինակներ: Դրանք հետևյալն են.

1. նախադեպային ուժ ունեն և վճիռները, և որոշումները: Դրանք հավասարապես վկայակոչվում են բոլոր դատական ակտերում որպես նախադեպային իրավունք (caselaw): Մխալ է այն կարծիքը, որ որպես նախադեպ կարելի է վկայակոչել միայն ըստ էության կայացված

վճիռները: Կոնվենցիայի մեծ թվով կարևոր սկզբունքներ սահմանվել, այնուհետև մեկնաբանվել ու վերամեկնաբանվել են որոշումների միջոցով, որոնք հավասարապես վկայակոչվում են դատական ակտերում:

2. Նախադեպային ուժ չունեն մեկ դատավորի կազմով կայացված անընդունելիության մասին վերջնական որոշումները, որոնք թեև դատական ակտեր են, սակայն զուրկ են բովանդակային մասից ու բավարար չափով պատճառաբանված չեն, որ նախադեպային որոշման հատկանիշ ստանան: Այս որոշումները, ի դեպ, չեն հրապարակվում:
3. Նախադեպային ուժ չունեն նաև միջանկյալ որոշումները, օրինակ՝ Դատարանի կանոնակարգի 39 կանոնի հիմքով «միջանկյալ միջոց»՝ ըստ էության հայցի ապահովման միջոց կիրառելու մասին դատարանի որոշումները, որոնք նույնպես չեն հրապարակվում:
4. Դատարանը երբեմն հեռանում է իր նախադեպերից և ստեղծում նոր նախադեպեր: Հետևաբար, պետք է ձգտել առավելապես վկայակոչել ավելի ուշ ընդունված նախադեպեր՝ վստահ լինելու համար, որ նախադեպային դրույթը կիրառվում է պրակտիկայում, քանի որ բացակայում է որևէ ընթացակարգ, որով հայտարարվում է, որ տվյալ նախադեպը կորցրել է իր ուժը: Ավելի ուշ ընդունված նախադեպերին հղում կատարելը նաև նպատակահարմար է այն առումով, որ Եվրոպական դատարանը շարունակ հղկում ու բարելավում է իր նախադեպային դրույթների տեքստը՝ դրանք ավելի համապատասխանեցնելով ներկա պրակտիկային:
5. Որպես կանոն, երբ դատարանը հղում է կատարում նախադեպային դրույթի, դրան անմիջապես հետևում է աղբյուրների՝ նախադեպերի վկայակոչումը: Եթե հնչեցված իրավական դիրքորոշմանը, որն ունի կոնցեպտուալ բնույթ, այլ ոչ թե փաստի գնահատական, չի հետևում

նախադեպային որոշումների վկայակոչում, ապա հարց է բարձրանում, թե արդյոք տվյալ դրույթը դատարանի կողմից աներկբայորեն ընդունվել է որպես նախադեպային: Ներկայացնենք հետևյալ օրինակը *Փիրուզյանն ընդդեմ Հայաստանի* գործով ՄԻԵԴ վճռից.

գործողությունների կատարման անհրաժեշտություն կա և, որ քննությունը դեռ շարունակվում է:

98. Դատարանը վերահաստատում է, որ հետագա քննչական գործողություններ կատարելու կամ քննությունն ավարտված չլինելու հիմնավորումները չեն համապատասխանում անձի քննության ընթացքում կալանքի տակ պահելու 5-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված ընդունելի որևէ հիմքին:

99. Ինչ վերաբերում է թաքնվելու կամ վարույթին խոչընդոտելու վտանգին, ապա Դատարանը նշում է, որ թե՛ Մարզի ընդհանուր

6. Դատարանը 98-րդ կետում արտահայտել է իրավական դիրքորոշում, որն իր բնույթով կոնցեպտուալ է ու աննախադեպ ու այդ իմաստով ոչ միայն առաջացրել է իրավական հետևանք սույն գործով, այլ կարող էր առաջացնել իրավական հետևանք նաև իրավակիրառ պրակտիկայում: Նախադեպային իրավունքի հիմնական առանձնահատկությունը նրանում է, որ դատարանի իրավական դիրքորոշումը հետևանք է առաջացնում ոչ միայն տվյալ գործով, այլ նաև տվյալ գործից դուրս՝ փոփոխություն բերելով ոչ միայն իրավակիրառ պրակտիկայում, այլ, որոշ դեպքերում, նաև օրենսդրության մեջ: Մինչդեռ տվյալ դեպքում դատարանի դիրքորոշմանը չի հաջորդել որևէ հղում որևէ աղբյուրի վրա: Դա կարող է նշանակել, որ դատարանը դեռ չունի հստակորեն ձևավորված մոտեցում տվյալ հարցի վերաբերյալ և ամենայն հավանականությամբ դիրքորոշումն արտահայտել է միայն տվյալ դատական գործի համար, այսինքն՝ դիրքորոշումը *dictum* է՝ նախադեպային ուժ չունեցող: Որպես այլընտրանք, առնվազն կարելի վստահաբար պնդել, որ դատարանն

այդ միտքը նախկինում չի արտահայտել որևէ այլ վճռում, քանի որ հակառակ դեպքում կվկայակոչեր որևէ աղբյուր՝ նախկինում կայացված որոշում:



Կան նախադեպային դրույթներ, որոնք իրենց բնույթով ունիվերսալ են և որպես այդպիսին կիրառելի են Կոնվենցիայի ցանկացած հոդվածի կամ իրավահարաբերության առնչությամբ՝ անկախ փաստերի նմանությունից: Հետևաբար, էական չէ, երբ նախադեպի վկայակոչումն արվում է էապես տարբեր փաստերի առնչությամբ, ու նման հանգամանքում անհիմն կլինի պնդել, որ վկայակոչված նախադեպը կիրառելի չէ, քանի որ երկու գործերի փաստերում կան էական տարբերություններ:

Սույն օրինակում վկայակոչվել է ընդհանուր բնույթի նորմ, որը կիրառելի է Կոնվենցիայի ցանկացած իրավահարաբերության նկատմամբ, քանի որ սահմանում է օրինականության ընդհանուր սկզբունքն իր երկու բաղադրիչներով՝ իրավական նորմի կանխատեսելիություն և մատչելիություն: Հետևաբար, կարիք չի լինի նաև ապացուցելը, որ վկայակոչված գործի փաստերը նման են վկայակոչվող գործի փաստերի հետ:



«Մեղադրող ապացույցը, լինի դա խոստովանության կամ իրեղեն ապացույցի տեսքով, որը ձեռք է բերվել բռնությունների գործադրման միջոցով կամ դաժանությունների կամ այլ վերաբերմունքի, որը կարելի է բնութագրել որպես խոշտանգում, երբեք չպետք է դրվի տուժողի մեղքի ապացույցի հիմքում, անկախ նրա ապացուցողական նշանակությունից»:

Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, թիվ 36549/03, 28/06/2007, § 63

Ի տարբերություն վերը նշվածի, սույն նախադեպային նորմը կարգավորում է կոնկրետ իրավահարաբերություն՝ խոշտանգման եղանակով ստացված ապացույցի օգտագործումը քրեական դատավարությունում՝ մեղադրական դատավճռում: Հետևաբար, սույն նորմը վկայակոչելիս պետք է ցույց տալ քննության ենթակա գործի և վկայակոչված գործի փաստերի առավել մեծ նմանություն, մասնավորապես, տվյալ դեպքում, որ երկու գործով էլ մեղադրյալը ենթարկվել է խոշտանգումների, որ խոշտանգումն իրականացվել է ցուցմունքներ, հետևաբար, ապացույց ստանալու նպատակով, որ երկու դեպքում էլ այդ ապացույցները դրվել են մեղադրանքի հիմքում և երկու դեպքում էլ վարույթ իրականացնող մարմինը հիմնվել է այդ ապացույցների վրա: Իսկ խնդիրը, թե տվյալ ապացույցն առանցքային է եղել, թե ոչ, էական չէ նախադեպային դրույթի ներքո:

Վերը նշված սկզբունքը սահմանվել է նաև Վճռաբեկ դատարանի կողմից, որը գրականության մեջ նշվում է որպես «Այվազյանի չափորոշիչ»: Այդ մասին մանրամասնորեն նշվում է Դաս 4-ում:

ԿԱՐԵՎՈՐ Է

Եվրոպական դատարանի վարույթում նախադեպ վկայակոչելիս կարևոր է ոչ թե հիմնավորելը, որ դատարանը պարտադիր կերպով պետք է հետևի վկայակոչված որոշմանը, այլ որ վկայակոչված որոշումը **տիպային օրինակ է** տվյալ գործով նման որոշում կայացնելու համար:

Հղումներ կատարելու կանոնները

Եվրոպական դատարանը մշակել է դատական ակտերին հղումներ կատարելու կանոններ: Համաձայն Դատարանի վճիռներին և որոշումներին անդրադառնալու և հղումներ տալու ձևաչափի ծանոթագրության՝ 1998 թվականի նոյեմբերի 1-ից մինչև

Լուծեք հավելվածի
«ՄԻԵԴ-ում նախադեպի կիրառության մասին»
 վարժությունը:

2007 թվականի ավարտը հրապարակված վճիռների և որոշումների հղումների ձևաչափը հետևյալն է.

- գործի անունը (*շեղադրանք (italics)*),
- դիմումի համարը, պարբերության համարը (*վճիռների դեպքում*),
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հապավումը (*ECHR*),
- տարին
- հատորի համարը:

2008 թվականի սկզբից մինչև 2015 թվականի ավարտը հրապարակված գործերի պարագայում հատորի համար առկա չէ (օրինակ՝ ECHR 2008): Որևէ հատուկ նշումի բացակայության պայմաններում մեջբերված տեքստը Պալատի կողմից հրապարակված գործն ըստ էության լուծող վճիռ է: Ցանկացած այլ պարագայում գործի անվանումից առաջ փակագծերում նշում է կատարվում, ինչպես, օրինակ՝ (*dec*)՝ ընդունելիության որոշումներ, (*just satisfaction*)՝ միայն արդարացի փոխհատուցմանը վերաբերող վճիռներ և այլն: [GC] (հայեր. ՄՊ) հապավումն ավելացվում է, եթե վճիռը կամ որոշումը կայացվել է Մեծ Պալատի կողմից:



Գրականություն

1. Սահիկ 4 **Հղումներ և վկայակոչումներ դատական ակտերում**
2. Ազդարար **ՄԻԵԴ վճիռների և որոշումների հղումների ձևաչափ**



ԴԱՍ 8 - 10

Խոցելի խմբերի վերաբերյալ դատական ակտեր կազմելու առանձնահատկությունները

Դաս 8	Հաշմանդամություն ունեցող անձինք	2 ժամ
Դաս 9	Կանայք	2 ժամ
Դաս 10	Վարժություններ	2 ժամ



Դասընթացի նպատակն է առանձին խոցելի խմբերի վերաբերյալ դատական ակտեր կազմելու առանձնահատկություններին ծանոթացնելը, մասնավորապես՝ որ դատական ակտեր կազմելիս դատավորները խուսափեն կարծրատիպային արտահայտություններից ու մտքերից, որոնք կարող են համարվել խտրական կամ կարող են հարց բարձրացնել դատավորի կանխակալության մասին:



Ակնկալվող արդյունքները .

- իմանալ, թե ինչու է անհրաժեշտ դատական ակտերը հարմարեցնել առանձին խմբերի կարիքներին,
- սովորել, թե որ բառերն ու արտահայտություններն են համարվում խտրական հաշմանդամություն ունեցող անձանց, կանանց և երեխաների վերաբերյալ դատական ակտեր կազմելիս,

- սովորել այդ բառերի ու արտահայտությունների հոմանիշները:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ կարծրատիպեր



Դատական ակտեր կազմելիս պետք է զգույշ լինել, որ չօգտագործվեն այնպիսի բառեր, արտահայտություններ կամ մտքեր, որոնք խտրական են և կարող են հանգեցնել դատական ակտի անիրավաչափությանը, ինչպես նաև հարց բարձրանա դատավորի կանխակալության, արդյունքում՝ անաչառության բացակայության մասին: Հաճախ արտահայտությունները կարող են առերևույթ չեզոք իմաստ ունենալ, սակայն խոցելի խմբի ընկալմամբ իրենց մեջ պարունակեն խտրական իմաստ: Հակախտրականության տեսանկյունից անձի ընկալումը երբեմն որոշիչ նշանակություն ունի՝ անկախ դիտավորության առկայությունից: Հետևաբար, եթե հաշմանդամություն ունեցող անձի ընկալմամբ որևէ արտահայտություն իր մեջ պարունակում է խտրական իմաստ, առավել նպատակահարմար է այդ արտահայտությունը չօգտագործել, քան թե պնդել, թե դիտավորություն չի եղել անձի նկատմամբ խտրական վերաբերմունք դրսևորել, կամ թե բառն իր սովորական իմաստով խտրական իմաստ չունի: Առավել կարևոր է, թե տվյալ խմբի ներկայացուցիչներն ինչպես են նախընտրում, որ իրենց անվանեն ինչպես առօրյա կյանքում, այնպես էլ դատական ակտերում: Առավել հաճախ խտրականությունը դրսևորվում է կարծրատիպերի միջոցով: Կարծրատիպերը հասարակական պատկերացումներ են երևույթների վերաբերյալ, որոնք հեռու են ճշմարտությունից, սակայն դրանք ընկալվում են որպես այդպիսին, քանի որ ձևավորվել են երկար տարիների ընթացքում: Հաճախ կարծրատիպային մտքերի արտահայտությունների հետևում թաքնված է կանխակալ բացասական կարծիք, նախապաշարմունք տվյալ անձի կամ անձանց խմբի նկատմամբ՝

պայմանավորված կենսաբանական կամ այլ հատկանիշներով, այդ թվում՝ նաև առողջական վիճակով: Այդուհանդերձ, ինչպես նշվեց վերևում, նույնիսկ եթե արտահայտված մտքի կամ բառի հետևում բացակայում է կանխակալ որևէ դիտավորություն՝ անձին վիրավորելու կամ նսեմացնելու վերաբերյալ, դիտավորության բացակայությունն ինքնին բավարար չէ, կարևոր է նաև, թե ինչպես է հասցեատերն ընկալում նման արտահայտությունը:

Հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ տարածված են բազմաթիվ կարծրատիպեր, որոնք խտրական են: Ընդհանրապես պետք է հիշել, որ ներկայումս աշխարհում տարածված է հաշմանդամության «սոցիալական» կամ «մարդու իրավունքների»

մոդելը՝ ի փոխարեն արդեն անցյալում մնացած «բժշկական» մոդելի: Ըստ բժշկական մոդելի՝ հաշմանդամություն ունեցող անձը համարվում է հիվանդություն ունեցող անձ, ում պետք է բուժել: Հետևաբար, ի սկզբանե համարվում

Դիտեք տեսաֆիլմ «Հաշմանդամության մասին հանրային կարծիքը»: Հասանելի է հետևյալ հղումով.

<https://www.youtube.com/watch?v=Wo5EbawWvrM&feature=youtu.be>

Ի հաշմանդամության մասին հանրային կարծիքը

է, որ նա խոցելի է, անհավասար վիճակում է գտնվում այլոց համեմատ, որ նրանք անհավասար հնարավորություններ ունեցող մարդիկ են, որոնց պետք է կարեկցել ու օգնել, իսկ հաշմանդամությունը համարվում է որպես հիվանդություն, դժբախտություն: Հասարակական իրավագիտակցության և պատկերացման մեջ դեռ գերակայում է հաշմանդամության բժշկական մոդելը: Հաճախ պետական ու համայնքային ծրագրերում գերակշռում է կարեկցանքի, օգնության և նույնիսկ խղճահարության շեշտադրումներ: Հասարակությունը մեծամասամբ նույնպես այդ մտայնությամբ է առաջնորդվում, երբ

խոսքը գնում է հաշմանդամություն ունեցող անձանց մասին: Այդ ամենը խտրական վերաբերմունք է, և աստիճանաբար պետք է ձերբազատվել նման կարծրատիպերից:

Ի տարբերություն դրա, հաշմանդամության սոցիալական մոդելը ենթադրում է, որ հաշմանդամություն ունեցող մարդիկ համարվում են այլոց հետ հավասար հնարավորություններ ունեցող անձինք, եթե հասարակությունն ապահովի հավասար պայմաններ նրանց տեղաշարժի, որոշումներ կայացնելու, իրավունակության և այլ հարցերում, որոնք ակնկալում են հաշմանդամություն ունեցող անձանց լիիրավ և հավասար հնարավորությունների հիման վրա մասնակցություն հասարակական կյանքի բոլոր ոլորտներում:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերյալ հիմնական իրավական ակտը «**Հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին**» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է 1993 թվականին: Հաշվի առնելով, որ օրենքն ընդունվել է Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի նախագծումից և ընդունումից շատ առաջ և չի համապատասխանում հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների միջազգային ժամանակակից սկզբունքներին ու չափանիշներին, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակվել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» նոր օրենքի **նախագիծը**, որը ներկայումս տեղադրված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման **www.e-draft.am** կայքում հանրային քննարկման համար: Նոր օրենքի հիմնական նպատակն է իրավակիրառ պրակտիկայում, հասարակական հարաբերություններում և մտածելակերպում հաշմանդամության սոցիալական մոդելի, մատչելիության և հնարավորությունների հավասարության, խտրականության բացառման հիմնարար սկզբունքների ներդնումը:

Վերը նշված զարգացումներին զուգընթաց՝ դատական ակտերը նույնպես պետք է համապատասխանեն հաշմանդամու-

**Օգտագործեք
«Բառեր և արտահայտություններ»
ազդարարը: Դա կարող է նաև
արդյունավետ ուղեցույցային
փաստաթուղթ հանդիսանալ գործնական
կիրառության համար:**

🔴 Մյակ տարբերակներ	🟢 Լավիրտարելի տարբերակներ
<ul style="list-style-type: none"> > թերաբժք անկարող, սահմանափակ հնարավորություններով անձ > <u>ևս առտոկն է</u> > <u>ևս դառու է</u> > <u>ևս զամլած է սայլակին</u> > <u>ևս թերզարգացած է</u> > <u>քնածին դեՖեկտ ունի</u> > <u>ևս հատուկ խնամքի կարիք ունի</u> > <u>ևս խուլուխամբ է</u> > <u>տառապալում է ուղեղային կաթվածով</u> 	<ul style="list-style-type: none"> ✓ <u>շաշմանդամություն ունեցող անձ</u> ✓ <u>ևս առտոկավ ունի</u> ✓ <u>ևս դառուի համախտանիշ ունի</u> ✓ <u>ևս սայլակ է օգտագործում</u> ✓ <u>սովորելու դժվարություններ ունի</u> ✓ <u>շփվում է ասքերով, սարքերի օգնությամբ և այլն</u> ✓ <u>ևս չի ստում կամ խոս է</u> ✓ <u>ևս մտավոր խնտիր ունի</u>

թյան սոցիալական մոդելի պահանջներին: Առաջին հերթին, դատական ակտերի տեքստերում պետք է բացառել կարծրատիպային արտահայտությունները, կարեկցանքի, խղճմտանքի իմաստ պարունակող բառերի օգտագործումը: Ինչպես գուցե արդեն նկատեցինք, անհրաժեշտ է ձեռնպահ մնալ «հաշմանդամ»

բառի օգտագործումից, այլ դրա փոխարեն օգտագործել «հաշմանդամություն ունեցող անձ» արտահայտությունը: Այսինքն, անհրաժեշտ է խուսափել հաշմանդամ բառն օգտագործել որպես գոյական: Մինևույն ժամանակ «հաշմանդամություն ունեցող անձ» արտահայտության հակառակ իմաստը «նորմալ», «առողջ» կամ «լիարժեք» բառերը չեն, այլ՝ ոչ հաշմանդամ կամ հաշմանդամություն չունեցող անձ:

Աշխատեք խուսափել այնպիսի արտահայտություններ օգտագործելուց, որոնք հաղորդում են դրամատիկ երանգներ, օրինակ՝ «դառը ճակատագիր», կամ «ողբերգական պատահարի բերումով հաշմանդամ դարձած», կամ «սայլակին գամված»: Շատ է օգտագործվում «տառապել» բառը որևէ հիվանդության հետ, օրինակ՝ «տառապում է աուտիզմով», «տառապում է ուղեղային կաթվածով», մինչդեռ դրանց փոխարեն կարելի է ասել. «նա աուտիզմ ունի», «նա ուղեղային կաթված ունի»: Կամ պետք է ասել «նա Դաունի համախտանիշ ունի», այլ ոչ թե՛ «նա դաուն է»: Նմանապես սխալ է օգտագործել «նա աուտիկ է», «կույր տղա», «նա դաուն է», այլ դրա փոխարեն աշխատեք

օգտագործել «նա աուտիզմ ունի», «կուրություն ունեցող տղա», «նա դաունի համախտանիշ ունի» արտահայտությունները:

Այսինքն, անհրաժեշտ է խուսափել առողջական վիճակը որպես պիտակ օգտագործելուց, քանի որ պիտակավորումը կարծրատիպ է՝ խտրական մոտեցում: Հոգեկան կամ հոգեբանական հաշմանդամության հետ կապված բառերը, ինչպիսիք են *գիժ, դաուն, հոգեկան*, ավելի շատ նման են պիտակների ու հասարակական պատկերացմամբ հաճախ դրանք հենց վիրավորելու նպատակով էլ օգտագործվում են:

Եվրոպայում վաղուց են հրաժարվել ինվալիդ բառի կիրառումից, որն իրականում ունի անվավեր, ոչ լիարժեք իմաստներ, մինչդեռ այդ բառը լայնորեն օգտագործվում էր Խորհրդային Միությունում և 90-ական թվականներին՝ Հայաստանում:

Այսպիսով, խոսքը ձևավորում է մեր պատկերացումը մարդու մասին, նմանապես արտահայտությունը դատական ակտում ցույց է տալիս դատավորի պատկերացումը հաշմանդամություն ունեցող անձի մասին: Մենք ոչ մեկս զերծ չենք կարծրատիպային մտածելակերպից, հաճախ նույնիսկ դա չգիտակցելով: Սակայն եթե ձևավորվել է հասարակական կամ իրավական մշակույթ հասարակության որոշակի խմբերի կողմից կոնկրետ կարծրատիպերի անընդունելիության վերաբերյալ, նույնիսկ եթե բառն իր սովորական իմաստի մեջ կամ որևէ բացատրական բառարանի ներկայացմամբ ունի չեզոք իմաստ, չմոռանանք, որ հասարակական հարաբերություններում շարունակ տեղի են ունենում փոփոխություններ և դատական ակտերը պետք է արտահայտեն այդ փոփոխությունները:

Այս հետազոտության մեջ մանրամասն վերլուծություններ են արվել դատական կարծրատիպերի մասին, որոնցից մի քանի օրինակներ ներկայացվել են տեքստում:

Programmatic Cooperation Framework for
Armenia, Azerbaijan, Georgia, Republic of Moldova, Ukraine and Belarus

Funded
by the European Union
and the Council of Europe



COUNCIL OF EUROPE



Implemented
by the Council of Europe

EUROPEAN UNION

CONSEIL DE L'EUROPE

րական բառարանի ներկայացմամբ ունի չեզոք իմաստ, չմոռանանք, որ հասարակական հարաբերություններում շարունակ տեղի են ունենում փոփոխություններ և դատական ակտերը պետք է արտահայտեն այդ փոփոխությունները:

Կանանց վերաբերյալ կարծրատիպեր



Դատական կարծրատիպերը կանանց համար արդարադատության մատչելիության առավել տարածված խոչընդոտներից են Հայաստանում, ինչպես նաև աշխարհի շատ երկրներում: Երբեմն կարծրատիպերը կանխորոշում են գործի ելքը. օրինակ, երբ հանցավոր արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած է հասարակության մեջ կամ ընտանիքում կնոջ դերի կամ կենսաբանական հատկանիշների կարծրատիպային մոտեցումները: Այսպես, հայտնի են դեպքեր, երբ դատական ակտում մեղադրյալի կումուլյատիվ աֆեկտի վիճակը գնահատվել է նրանով, որ նրա կինը, հանցագործության զոհը, դրսևորել է հակաբարոյական վարքագիծ: Գործել է կարծրատիպը, որ անհավատարիմ կանայք արժան են բռնության, կամ որ հենց կանանց «անբարոյական վարքագիծը» ինքնաբերաբար հանգեցնում է աֆեկտի և արդարացնում բռնությունը նրանց հանդեպ: Մինչդեռ անբարոյական բառի օգտագործումը դատական ակտում միանգամայն տեղին չէր, դա խտրական պիտակավորում է, ըստ որի ստացվում է, որ միայն ամուսնության մեջ գտնվող կանայք են ընդունակ կատարել անբարոյական արարք, եթե գտնվում են արտամուսնական կապի մեջ: Մի հետազոտության մեջ հարց է բարձրացվում, թե արդյոք դատական ակտում անբարոյականության մասին նույն եզրահանգումը կկատարվեր, եթե նման հանգամանքում ամուսինը լիներ հանցագործության զոհ և կինը նրան դանակահարած լիներ դավաճանության համար:

Բազմաթիվ երկրներում բռնաբարության հանցակազմում վճռորոշ օբյեկտիվ հատկանիշ է, օրենքով կամ ձևավորված պրակտիկայի ուժով, թե արդյոք տուժողը ցույց է տվել դիմադրություն: Եթե դիմադրության մասին փաստը բացակայում է, արարքը չի կարող համարվել բռնաբարու-

Լուծեք
Գրականության ցանկում ներառված վարժությունները
 (Սահիկ 6-9):

թյուն: Նման մոտեցումը նույնպես բխում է տարածված կարծրատիպից, որ բռնաբարության զոհերը պետք է ֆիզիկական դիմադրություն ցույց տված լինեն: Մինչդեռ շատ են դեպքերը, երբ բռնաբարության զոհը հենց սկզբից դադարում է որևէ դիմադրություն ցույց տալ, որը բացատրվում է տարբեր պատճառներով՝ վախ, շոկ, ահաբեկում: Տիրում է նաև տարածված կարծրատիպ, որ կանայք հաճախ հնարում են բռնության կամ բռնաբարության մասին պատմություններ, որ վրեժ լուծեն իրենց տղամարդկանցից:

Ընտանեկան բռնության գործերով ամենատարածված կարծրատիպերը ենթադրություններն են, որ 1) կանայք չափազանցնում են պոտենցիալ վտանգը, քանի որ իրենց բնությամբ էմոցիոնալ են, 2) նրանք իրականում չեն ցանկանում հեռանալ իրենց բռնարար ամուսիններից, այլ պարզապես նախազգուշացնում են նրանց, հետևաբար՝ չափազանցնում են փաստերը, 3) վերջիվերջո, նրանք պարզապես կմիանան իրենց ամուսիններին, հետևաբար, պետությունը չպետք է միջամտի նրանց նեղ անձնական, ընտանեկան խնդիրներին:

Հայտնի են դեպքեր, երբ բռնության մասին հաղորդում ներկայացրած կնոջ ներկայացուցիչներին ոստիկանության աշխատակիցը տարակուսանք է հայտնել, որ կինը պետք է որ ինչ-որ վատ բան արած լիներ, որ ամուսինը նման վատ վերաբերմունք է ցուցաբերել:

Վերը նշված օրինակները կանխակալ բացասական վերաբերմունքի դրսևորումներ են: Դատական ակտերում նման գնահատականներ չեն կարող հնչել, հակառակ դեպքում դատավարության կողմը կարող է հարց բարձրացնել արդար դատաքննության իրավունքի խախտման համար՝ դատավորի անաչառության բացակայության, արարքի սխալ որակման հիմքով, կամ խտրականության արգելքի իրավունքի խախտման հիմքով:

Հաշվի առնելով կանանց խոցելիությունը որոշ տեսակի իրավախախտումների գործերով, օրինակ՝ սեռական բռնության, թրաֆիքինգի, ընտանեկան բռնության գործերով, ան-

հրաժեշտ է, որ արդարադատության մարմինները, դատարանները ցուցաբերեն գենդերազգայուն մոտեցում արդարադատություն իրականացնելիս: Դա վերաբերում է նաև դատական ակտերի տեքստերին: Բացի նրանից, որ դատավորներն արարքը որակելիս պետք է զերծ մնան կարծրատիպային գնահատականներից, նրանք պետք է զգուշություն ցուցաբերեն որոշակի արտահայտություններ, բառեր, գնահատականներ հնչեցնելուց, որոնք կարող են դատավարության կողմի մոտ տպավորություն ստեղծել, որ դատավորն ունի կանխակալ բացասական դիրքորոշում կամ նախապաշարմունք կոնկրետ իրավահարաբերություններում կնոջ դերի վերաբերյալ:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանվում է «գենդերային կարծրատիպեր» հասկացությունը, ըստ որի «գենդերային կարծրատիպերը կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներն են: Այսինքն՝ գենդերային կարծրատիպերն ընդհանրացված կամ կանխակալ պատկերացումներ են այն հատկանիշների կամ դերերի վերաբերյալ, որոնց պետք է համապատասխանեն կանայք և տղամարդիկ տվյալ ժամանակահատվածում և հասարակարգում՝ **զուտ իրենց սեռի պատճառով:**

Գենդերային հիմքով կարծրատիպերը լինում են չորս տեսակ՝ սեռով պայմանավորված կարծրատիպեր, սեռականությանը պայմանավորված կարծրատիպեր, սեռով պայմանավորված դերերի մասին պատկերացումներ և համադրված կարծրատիպեր:

Սեռով պայմանավորված կարծրատիպերը կնոջ և տղամարդու ֆիզիկական, կենսաբանական հատկանիշների հիմքով ընդհանրացված կանխակալ բացասական կարծիքներ են: Օրինակ՝



Երեխայի խնամակալության գործով դատական քննության ընթացքում դատավորը բանավոր հայտարարում է, որ կինը սիրեկան ուներ, հետևապես չէր կարող լավ մայր լինել: Այս համոզմունքը կապված է կնոջ սեռականության վերաբերյալ կարծրատիպերի հետ: Նույնանման հանգամանքում տղամարդկանց պարագայում դրան այդքան էլ մեծ նշանակություն չի տրվում: Կնոջ ամուսնական դավաճանության հարցը վերաբերելի չէ երեխայի խնամակալության հարցը դատական կարգով լուծելիս:

«...ի հավելումն վերը նշվածի, չպետք է մոռանալ, որ վիրահատության պահի դրությամբ հայցվորն արդեն 50 տարեկան էր և ուներ երկու երեխա, այսինքն՝ գտնվում էր մի տարիքում, երբ սեռական հարաբերություն ունենալն այնքան կարևոր չէ, որքան երիտասարդ տարիքում, որի նշանակությունը նվազում է տարիքի հետ»:

Սեռականությամբ պայմանավորված կարծրատիպերը կանանց և տղամարդկանց սեռական վարքագծի և դրա հատկանիշների վերաբերյալ ընդհանրացված կամ կանխակալ կարծիքներ են: Սեռականությամբ պայմանավորված խտրականության օրինակ է հետևյալ դատական ակտը (մեջբերում).



Դատարանը, գնահատելով քրեական գործով ձեռք բերված ապացույցները, գտնում է, որ տուժող ...- ի տարիներ շարունակ տևած հակաբարոյական վարքագիծը՝ ... - ի հետ փաստական ամուսնության մեջ գտնվելու պայմաններում միաժամանակ այլ տղամարդկանց հետ ինտիմ կապեր պահպանելը, իրենից հեռանալու դեպքում ...-ին սպառնալիքներ տալը, դեպքին նախորդող օրը ...- ի հետ

իր սիրեկան ...- ի հետ հանդիպման ընթացքում վերջինիս սեր խոստովանելը և դեպքի գիշերը ... - ին կով անվանելը, նրան փանից դուրս շարտելու սպառնալիքները, այնուհետև լիկյորի շշով ...- ի գլխին հարվածելը կարող էին երկարատև հոգեճնշող իրավիճակ ստեղծել ... - ի մոտ և սպանություն կատարելու պահին նրա մոտ կարող էր առաջանալ հոգեկան խիստ հուզմունքի վիճակ:

Այսպիսով, դատարանն ապացուցված է համարում, որ Վոլոդյա Մուրադյանը սպանությունը կատարել է տուժողի կողմից դրսևորած պարբերաբար հակաբարոյական վարքագծի կապացույթամբ առաջ եկած երկարատև հոգեճնշող իրավիճակի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում, որպիսի արարքի համար նա պետք է պատասխանատվության ենթարկվի ՀՀ քրեական օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին մասով:



Գործով միանշանակ դիտվում է տուժողի հակաօրինական վարքագիծը՝ խոհանոցի պատուհանի ապակին կտրելը, աղբը պաշտպանյալի երեսին շարտելը, առաջին անգամ դանակը պաշտպանյալին փալն ու ասելը «փիա խփի ինձ», ագրեսիվ վիճակում դանակը վերցնելը և պաշտպանյալի վրա հարձակվելը, երրորդ անձի ներկայությամբ վիրավորանք հասցնելն ու անբարոյական վարքագիծն՝ ամուսնական անհավատարմությունը:



«Տուժողի գործադրած բռնության, ծաղրուծանակի, ծանր վիրավորանքի կամ այլ հակաիրավական կամ հակաբարոյական գործողությունների (անգործության), ինչպես նաև տուժողի՝ պարբերաբար դրսևորած հակաի-

րավական կամ հակաբարոյական վարքագծի կապակցությամբ առաջ եկած երկարատև հոգեճնշող իրավիճակի հետևանքով հանկարծակի առաջացած հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարած սպանություն»:

Սեռով պայմանավորված դերերի ընկալման հիմքով կարծրատիպերն ընդհանրացված կամ կանխակալ կարծիքների են, որ կնոջը կամ տղամարդուն վերապահված է որոշակի դերակատարում՝ պայմանավորված նրանց սեռով: Այդպիսիք են հետևյալ մեջբերումները դատական ակտերից՝



Կանայք, քնականաբար, ավելի լավ են հոգ փանում երեխաների և ընտանիքի մյուս անդամների մասին, քան տղամարդիկ:



Տղամարդիկ են տան հացի խնդիրը հոգացողները, և ընտանիքը ֆինանսապես ապահովելը նրանց աշխատանքն է, նրանց պարտականությունների մեջ է մտնում:



Գրականություն

1. Սահիկ 5 Առանձին խումբ անձանց վերաբերյալ գործերով դատական ակտեր կազմելու առանձնահատկությունները
2. Սահիկ 6 Գենդերային խտրականությունը և քրեական արդարադատության մատչելիությունը

3. Սահիկ 7 Գենդերային կարծրատիպեր քրեական արդարադատությունում – ամուսնաընտանեկան հարաբերություններ
4. Սահիկ 8 Գենդերային կարծրատիպեր քրեական արդարադատությունում – սեռական բռնություն
5. Սահիկ 9 Գենդերային կարծրատիպեր քրեական արդարադատությունում – աշխատանքային հարաբերություններ
6. Ազդարար Բառեր և արտահայտություններ
7. Լրացուց. ընթ. Դատավորների և դատախազների վերապատրաստման համար՝ կանանց համար արդարադատության մատչելիության ապահովման վերաբերյալ ձեռնարկ
-

ԱՐԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ
ՄՇԱԿՄԱՆ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

